Ազգ
Azg
11 ՄԱՅԻՍ 2012 ՈՒՐԲԱԹ 84(4936)
ISSN: 1829-1651

# Օլանդի ընտրության թուրքական արձագանքները

*Թուրք քաղաքագետները համամիտ չեն Թուրքիայի ղեկավարների լավատեսությանը*

Հ. ՉԱՔՐՅԱՆ

Ֆրանսիայի նախագահական ընտրություններում քվեների նվազագույն առավելությամբ հաղթեց Սոցիալիստական կուսակցության թեկնածու Ֆրանսուա Օլանդը: Այս հաղթանակը Թուրքիայի կառավարող շրջանակներում գնահատվում է դրական: Սակայն խնդիրը ոչ այնքան Եվրոմիությանը Թուրքիայի անդամակցության հարցում Ֆրանսիայի սոցիալիստների բարյացակամ մոտեցումն է, որքան «հայերի ցեղասպանության անհիմն պնդումներին տուրք տվող» Նիկոլա Սարկոզիի պարտությունը:

Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը դրա առնչությամբ ասաց, որ Ֆրանսիայում 2 միլիոն մահմեդականներ աջակցել են Սարկոզիի մրցակցին, ապա եւ աջակցությունը պայմանավորեց Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագծով: Այլ կերպ, Եվրոմիության հետ անդամակցության բանակցություններ վարող Թուրքիայի ղեկավարների առաջնահերթությունը ոչ թե եվրոպական այս կառույցի առանցքային երկրներից Ֆրանսիայի հետ հարաբերություններն են, այլ այս պետության օրակարգից համանման օրինագծերի առաջնահերթ նշանակությամբ դուրսմղումը:

Օրինագծի դուրսմղման, ավելի շուտ դուրսմղումը ընտրություններում Սարկոզիի պարտության հետ պայմանավորելու Թուրքիայի ղեկավարների լավատեսությունը, սակայն, կասկածի տակ են դնում թուրք քաղաքագետները: Օլանդի ընտրությունը նրանք ԵՄ-ի հետ բանակցություններում դրական են գնահատում, իսկ Հայոց ցեղասպանության օրինագծերի հարցում՝ մտահոգիչ:

*Տես էջ 5*

# Գլխավոր ինտրիգը հինն է՝ ՀՀԿ-ԲՀԿ կոալիցիա կլինի՞

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Չնայած մայիսի 9-ի տոն օրով ԿԸՀ-ի նախագահ **Տիգրան Մուկուչյանն** ասուլիս արեց ու պատասխանեց ընդդիմության մեղադրանքներին՝ ընտրակեղծիքների մասով, ու նշեց, որ ամեն ինչ հրապարակային է, բոլոր տվյալները տեղադրված են ԿԸՀ կայքում, սակայն ընտրությունների արդյունքների վերաբերյալ ընդդիմության գնահատականներին դեռ հասարակությունը սպասում է: Տ. Մուկուչյանը հատկապես պատասխանել էր ՀՀՇ նախագահ **Արամ Մանուկյանի** այն պնդմանը, թե ԿԸՀ-ն բարձր մասնակցության խայտառակ թվեր է ներկայացրել, նշելով, թե թվերը ստացվել են էլեկտրոնային եղանակով եւ տեխնիկապես սխալ մուտքագրված սխալներ հնարավոր են, դրա համար էլ հայտնված արդյունքները նախնական են: ԿԸՀ նախագահը օրինակ էր բերել, որ 84 ընտրող ունեցող տեղամասում մասնակցել է 86 ընտրող, մինչդեռ դա մուտքագրական սխալ է եղել ու 66 ընտրող է մասնակցել իրականում: Նա նաեւ ի պատասխան այն մեղադրանքի, թե տեղամասեր են եղել, որտեղ 100 տոկոս եւ ավելի ընտրողներ են մասնակցել, ասել էր, թե միայն 9 տեղամասում է 100 տոկոս մասնակցություն գրանցվել, դրանք էլ նախնական տվյալներ են, ու չի բացառվում, որ վերջնական արդյունքներում փոխվեն: Բացի դրանից՝ որոշ տեղամասերում ստացված դիմումների հիման վրա վերահաշվարկներ են կատարվում, եւ ի վերջո, որեւէ էական խախտում ստուգումներով չի հայտնաբերվում:



Այսպես թե այնպես՝ այսօր հայտարարություն պետք է անեն ընտրությունների վերահսկման միասնական շտաբն ու «Հանրապետություն» կուսակցության նախագահ Արամ Սարգսյանը: Երեկ եւ առաջին օրը տարբեր ՀԱԿ-ականներ տարբեր կարծիքներ էին հայտնում 7 մանդատով խորհրդարան մտնել-չմտնելու վերաբերյալ: Օրինակ՝ **Արշակ Բանուչյանը** հռետորական հարց էր հնչեցնում՝ մանդաս վայր դնելով ի՞նչ հարց է լուծվում, եթե ԲՀԿ-ն, ՀՅԴ-ն եւ մյուսները (՞) դա անեն, իրենք էլ կանենք: **Պետրոս Մակեյանն** էլ ՀԱԿ-ի վերջին հանրահավաքն էր իմիտացիա անվանել, որտեղ, ի դեպ, Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթը շատերը գնահատեցին որպես հրաժեշտի խոսք ու կարապի երգ:

*Տես էջ 2*

# Հասարակությունը դեպրեսիա է ապրում

**ՀՀ վաստակավոր մանկավարժ, հոգեբան Գոգա Հարությունյանի գնահատմամբ՝ այսօր հասարակությունը հավատ չունի ոչ մի բանի նկատմամբ:**

**«Չկա հավատ, մարդիկ անհանդուրժող են: Մարդկանց հարցնում եմ՝ ի՞նչ է լինելու, ասում են՝ կլինի այն, ինչ եղել է մինչեւ այսօր: Մարդիկ հանրահավաքի են գնում հոգու ճիչով, որովհետեւ չեն տեսնում, թե ի՞նչ է լինելու իրենց ապագան ու երեխաների վիճակը», ասում է հոգեբանը՝ հավելելով, որ ընտրության ելքից գոհ մարդկանց զանգված կա, սակայն հիմնական մասն անտարբեր է, եւ ընտրությունների արդյունքը նրան ոչինչ չի տալիս: Հոգեբանը դա բացատրում է սոցիալական մեծ անկմամբ. մարդիկ երաշխիք չունեն, որ որոշ ժամանակ անց ամեն ինչ լավ է լինելու կամ գուցե դրական փոփոխություններ են նկատվելու:**

**«Մարդը, որը չի տեսնում իր ապագան, հոգեկան ծանր վիճակում կարող է հայտնվել: Հասարակությունը դեպրեսիա է ապրում», ասում է հոգեբանը՝ հավելելով, որ ընտրությունների ընթացքում արտառոց ոչինչ տեղի չի ունեցել: Հետընտրական շրջանն էլ հանգիստ է: «Կազմակերպվում են հանրահավաքներ, որոնց մարդիկ գնում են՝ լսելու, թե ինչե՞ր են կատարվել ընտրություններին, այլ ոչ թե ինչ է լինելու հետագայում»:**

Հ. Հ.

# Դավթաշենի կամրջից ցած է նետվել

**Մեկ շաբաթ առաջ Կիեւյան կամրջից ցած նետվեց երիտասարդ փաստաբան Նորայր Միքայելյանը, իսկ մայիսի 10-ին, ժամը 15-ի սահմաններում Դավթաշեն կամրջից իրեն ցած է նետել 45-50 տարեկան մի տղամարդ: Դեպքի մասին ոմն քաղաքացուց ստացած ահազանգից հետո դեպքի վայր են ժամանել ոստիկանության Դավթաշենի բաժնի օպերատիվ խումբը, 03 շտապօգնության ծառայությունն ու ԱԻՆ փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման կենտրոնի օպերատիվ խումբը: Պարզվում է ինքնասպանություն գործած անձի ինքնությունը:**

Մ. Մ.

# Վաղվա «Ազգ. Մշակույթ-Հավելվածում»

**Հայացք անցյալին. Ավետիք Իսահակյանի 100-ամյա հոբելյանի նախընթաց պետական-գրական միջավայրն ու մթնոլորտը: Ավիկ Իսահակյան. «Թե ինչպես չդարձանք Իսահակյանի հոբելյանական հանձնաժողովի անդամ»:**

**Եղիշե Չարենցի «Գիրք ճանապարհի» ժողովածուի՝ 1933 թ.-ի հրատարակության երկու տարբերակները. «Ի՞նչ են ասում փոփոխությունները», ըստ Վազգեն Գաբրիելյանի:**

**Նոր գրքեր: Երաժշտագետ Կարինե Խուդաբաշյանի «Հայ երաժշտությունը համեմատական երաժշտագիտության տեսանկյունից» նորընծա ժողովածուն՝ Արծվի Բախչինյանի ներկայացմամբ եւ գրականագետ Աելիտա Դոլուխանյանի «Եվրոպայի հայագետներ» մատենաշարի «Ֆրեդերիկ Մակլերը հայագետ» 6-րդ հատորը՝ Անուշավան Զաքարյանի հայացքով:**

**Համլետ Դավթյանի վերաբերմունքը մեր օրերում տարածում գտած վտանգավոր մի երեւույթի՝ «Մտքագողության մասին, կամ քեզնից առաջ ասողին հիշելը ինքնահարգանքի նշան է»:**

**Հայագիտական նոր գրքերի տեսություն՝ ըստ Գեւորգ Յազըճյանի:**

Մ. Բ.

# Արամ Վեհափառը համայն աշխարհի հայության կրոնական առաջնո՞րդ

Մայիսի 7-ին թեհրանահայ համայնքը դիմավորեց Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ հայրապետին՝ Թեհրանի Սուրբ Սարգիս եկեղեցում: Նրան պաշտոնապես հրավիրել էր Իրանի «Մշակութային կենտրոնի եւ Իսլամական միջազգային հաղորդակցության կազմակերպությունը»:

Կաթողիկոսը հանդիպումներ ունեցավ Թեհրանի մարզամշակութային միությունների, եկեղեցիների ու ազգային տարբեր մարմինների հետ: Ամենուր Արամ Ա Վեհափառ հայրապետին դիմավորում էին հայերենով ու պարսկերենով գրված պաստառներով, որոնցում, սակայն, Արամ Ա Վեհափառի անունը, սխալմամբ թե միտումնավոր, շեշտվում էր որպես աշխարհի հայության կրոնական առաջնորդի:

1995 թվականից ի վեր Արամ Վեհափառը վեց անգամ այցելել է Իրան եւ ամեն անգամ այս նույն սխալը կրկնվել է:

Իրանահայության գիտակ անձինք բազմիցս զգուշացրել են պատկան մարմիններին, որ այդ անթույլատրելի սխալը չկրկնվի այլեւս, սակայն, դժբախտաբար, ընդունելությունը կազմակերպող որոշ անգետներ կա՛մ ականջալուր չեն եղել, կա՛մ միտումնավոր խառնաշփոթ եւ պառակտում են ուզում ստեղծել հայությանը համախմբող այս կարեւորագույն հարցում: Չէ՞ որ միշտ էլ, բոլոր պարագաներում ժողովուրդը Ամենայն հայոց կաթողիկոսի շուրջն է համախմբվել:

Ի՞նչ պետք է անել այս կապակցությամբ. այս հարցի լուծումը թողնում ենք մեր կրոնական ու պետական այրերին:

ՌՈՒԲԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ
Թեհրան, 10.05.2012

# Շվեդիայի խորհրդարանում ադրբեջանական նախագծի թուրքական իրագործումը տապալվեց

Շվեդիայի խորհրդարանը մերժել է ադրբեջանական հովանավորությամբ, ծագումով թուրք պատգամավոր Մեհմետ Կապլանի մեջտեղ բերած «Իրավիճակը Ղարաբաղում» բանաձեւը, որի քննարկումը տեղի է ունեցել մայիսի 9-ին:

«**Ազգը**» տեղեկացրել է, որ դեռեւս նախորդ տարվա հոկտեմբերի սկզբին ներկայացված բանաձեւի նախագիծն ադրբեջանաթուրքական ուժերի կողմից ամեն կերպ փորձ էր արվում առաջ տանել այն դեպքում, երբ շվեդական խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը ընդգծված բացասական վերաբերմունք էր արտահայտել բանաձեւի նախագծի առնչությամբ, ինչն էլ ակնհայտորեն չէր կարող նպաստել բանաձեւի անցկացմանը:

Շվեդիայի հայկական ասոցիացիաների միությունը տեղեկացնում է, որ բանաձեւի նախագծով կոչ էր արվում Շվեդիային ակտիվ ներգրավում ունենալ ղարաբաղյան հակամարտության հարցում՝ «պահանջելով անհապաղ դուրս բերել հայկական զինուժը օկուպացված ադրբեջանական տարածքներից... միջազգային կազմակերպություններն էլ պետք է աշխատեն ապահովել Լեռնային Ղարաբաղի հայ փոքրամասնության անվտանգությունը, ապահովությունն ու ինքնակառավարումը Ադրբեջանի սահմաններում»:

Բանաձեւի նախագիծը, որ նախաձեռնվել ու ստորագրվել էր միայն թուրք խորհրդարանականի կողմից, առանձին քննարկման առարկա չի դարձել, այլ քվեարկվել է մի քանի այլ հարցերի հետ: Սակայն հարցի առնչությամբ Շվեդիայի խորհրդարանը ընդունել է արտաքին հարաբերությունների հարցերով հանձնաժողովի ձեւակերպումը, որով նշվում է. «Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը պետք է խաղաղ լուծում գտնի, եւ կա այդ հարցը լուծելու մեխանիզմ. դա Մինսկի խմբի պատասխանատվությունն է: Հանձնաժողովը աջակցում է ԵԱՀԿ շրջանակներում իրականացվող ջանքերին»:

Հատկանշական է, որ Շվեդիայի խորհրդարանի ընդունած, իր իսկ հանձնաժողովի կազմած տեքստը անդրադարձ է պարունակում նաեւ Արեւելյան գործընկերության ծրագրին, շեշտադրելով, որ այդ շրջանակներում Եվրոմիության կողմից իրականացվող Ասոցացման համաձայնագրերի բանակցությունները Հայաստանի եւ Վրաստանի հետ զգալի առաջընթաց են ապահովել այն դեպքում, երբ Ադրբեջանի հետ դրանք «բավականին դժվար ու բարդ են»:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱԶԳ

# Ընթացիկ

## «Ազգը» եւ «Новое Время»-ն՝ համեմատաբար ամենաչեզոքը ընտրական գործընթացները լուսաբանելիս

Տպագիր մամուլը խորհրդարանական ընտրությունների՝ մարտի 12-ից մայիսի 5-ը առավելապես քարոզչություն է իրականացրել, այլ ոչ թե կատարել իր հիմնական առաքելությունը, որպիսին Հասարակայնության հետ կապերի հայաստանյան ասոցիացիայի փորձագետ **Արմեն Մինասյանը** համարում է տեղեկությունների տարածումը: Ընդ որում, հայաստանյան թերթերը փաստացի առավելապես հակաքարոզչություն են իրականացրել, քան կոնկրետ մեկ ուժի քարոզչություն:




Երեկ «Նովոստի Արմենիա»-ում ներկայացվեցին խորհրդարանական ընտրական գործընթացների առնչությամբ տպագիր մամուլի մոնիտորինգի արդյունքները, որ իրականացրել է Հասարակայնության հետ կապերի հայաստանյան ասոցիացիան՝ ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի կողմից իրականացվող եւ Եվրոմիության կողմից ֆինանսավորվող «Աջակցություն Հայաստանում 2 ընտրական գործընթացներին» ծրագրի շրջանակներում: «Տպագիր մամուլի մոնիտորինգ՝ խորհրդարանական ընտրությունների շրջանում» ծրագրի շրջանակներում 2,5 ամիս դիտարկվել են հայաստանյան 16 թերթերի ընտրական գործընթացներին վերաբերող հրապարակումները (**«Ազգ»**, «Իրատես դե ֆակտո», «Իրավունք», «Հայոց աշխարհ», «Հայկական ժամանակ», «Երկիր», «Ժամանակ», «Ժողովուրդ», «Չորրորդ իշխանություն», «Հրապարակ», «168 ժամ», «Առավոտ», «Հայացք», «Օրակարգ», «Голос Армении», «Новое Время»):

Ըստ մոնիտորինգի արդյունքների՝ հայաստանյան տպագիր մամուլը զգալի հետաքրքրություն է ցուցաբերել ընտրական գործընթացների նկատմամբ, թեեւ ընդհանուր առմամբ հրապարակումները վերաբերել են հենց գործընթացին, այլ ոչ դրա հիմքում ընկած կամ դրվող խնդիրներին:

Մինասյանի ընդհանրացմամբ, առավելապես բացասական հրապարակումներով հանդես են եկել «Չորրորդ իշխանությունը» եւ «Հայկական ժամանակը», այն դեպքում, երբ, օրինակ, «Ժողովուրդը» հավասարապես բացասական հրապարակումներ է ունեցել ինչպես իշխանությունների, այնպես էլ ընդդիմության վերաբերյալ, իսկ չեզոք բնույթի նյութերի գերակշռություն է գրանցվել **«Ազգ»** (դիտարկված ողջ ժամանակահատվածում չեզոք նյութերը կազմել են ընդհանուրի 78.7 տոկոսը) եւ «Новое Время» (77.9 տոկոսը) թերթերի հրապարակումներում: Վերջին երկուսի առնչությամբ, Մինասյանի հիշեցմամբ, պետք է հաշվի առնել, որ այս պարբերականներն ընդհանրապես ներքաղաքական կյանքին համեմատաբար քիչ են անդրադառնում:

Փորձագետի մատուցմամբ, քարոզարշավի ընթացքում մամուլի ընդհանուր հրապարակումների մոտ 40 տոկոսն է վերաբերել ընտրական գործընթացներին, ընդ որում, թերթերում զգալի մաս են կազմել ինչպես բացահայտ քարոզչությունը, այնպես էլ քողարկված քարոզչություն պարունակող նյութերը: Ընտրություններին մասնակից կուսակցությունների առումով հրապարակումները բացասական են եղել ընդդիմադիր ուժերի դիրքորոշման հետ ասոցացվող մամուլում ընդդեմ իշխանության եւ իշխանականում՝ ընդդեմ ընդդիմության այն դեպքում, երբ «Ժառանգությանը» երկու «թեւերի» թերթերն էլ առավելապես հիշատակել են բացասական շեշտադրումներով:

Քանակական առումով թերթերն ընդհանուր հրապարակումների 8769 թվից ամենաշատը՝ 2616 նյութերում հիշատակել են ՀՀԿ-ը, ԲՀԿ-ին անդրադարձել ե 1524 հրապարակումներում, ապա ՀԱԿ-ին ու «Ժառանգությանը»՝ արդեն համապատասխանաբար 1485 եւ 1017 նյութերի տեսքով:

Ա. Հ.

## Գլխավոր ինտրիգը հինն է՝ ՀՀԿ-ԲՀԿ կոալիցիա կլինի՞

*1-ին էջից*

Այսպես թե այնպես, սպասենք վերահաշվարկների արդյունքին, որոնք այնքան աննշան թվով ընտրատարածքներում են տեղի ունենում, որ եթե անգամ խախտումներ հայտնաբերվեն՝ հազիվ թե ազդեն ընտրությունների վերջնարդյունքի վրա:

Այնպես որ արժե պատմել, թե ի՞նչ է հաջորդելու ընտրությունների վերջնական արդյունքների հայտարարմանը: Ըստ սահմանադրության՝ նոր Ազգային ժողովի լիազորությունների ժամկետը սկսված է համարվում նրա առաջին նիստի սկսման պահին, իսկ նորընտիր ԱԺ-ի առաջին նստաշրջանը գումարվում է պատգամավորների ընդհանուր թվի 2/3-ի ընտրությունից հետո (վերջնական արդյունքի հրապարակումից հաշված), երրորդ հինգշաբթի օրը: Այդ օրը հենց կառավարությունը հրաժարական է տալիս, սակայն կառավարության անդամները շարունակում են կատարել իրենց պարտականությունները, մինչեւ կառավարության հրաժարականից հետո տասնօրյա ժամկետում երկրի նախագահը վարչապետ է նշանակում Ազգային ժողովում պատգամավորական տեղերի բաշխման հիման վրա եւ պատգամավորական խմբակցությունների հետ խորհրդակցության արդյունքում, ընդ որում պետք է նշանակվի պատգամավորների մեծամասնության վստահությունը վայելող անձ: Պարզ է, որ այս անգամ այդ հարցը ՀՀԿ-ն միայնակ կարող է լուծել: Իսկ արդեն կառավարությունը վարչապետի նշանակումից հետո քսանօրյա ժամկետում է կազմավորվում, կառավարության անդամներին նշանակում է նախագահը՝ վարչապետի առաջարկությունների հիման վրա: Այնուհետեւ կազմավորվում է Ազգային անվտանգության խորհուրդը, նշանակվում եւ հետ են կանչվում արտերկրի մեր դիվներկայացուցիչները, իսկ Ազգային ժողովին առաջարկվելու է հաստատել նոր գլխավոր դատախազ, ԿԲ նոր նախագահ, ՎԴ նոր նախագահ եւ այլն: Սակայն մինչ այդ առաջին նստաշրջանում ընտրվում է ԱԺ նախագահ, որին եւս կառաջադրի մեծամասնությունը, ապա եւ տեղակալներ, հենց առաջին նիստին կձեւավորվեն ԱԺ խմբակցությունները:

Այժմ գործող կառավարությունը ստեղծվել էր կոալիցիոն քվոտաների հիման վրա: Բայց քանի որ ՀՀԿ-ն նրանից, թե արդյոք նոր կոալիցիա կձեւավորվի՞, ըստ դրա էլ նոր կառավարություն կկազմվի: Տրամաբանությունը հուշում է, որ ՀՀԿ-ն կարող է եւ կոալիցիա չձեւավորել, քանի որ միայնակ կառավարելու համար Ազգային ժողովում ունի բավարար մեծամասնություն: Այս դեպքում հենց ՀՀԿ-ն կկրի երկրում տեղի ունեցող ամեն բանի պատասխանատվությունը: Սակայն հետեւելով ՀՀԿ նախագահի՝ քարոզարշավի ողջ ընթացքում դրսեւորած հանդուրժողական կեցվածքին՝ ամենայն հավանականությամբ այլ ուժերի կոալիցիայում ներգրավելու առաջարկներ կարվեն: ՀՀԿ-ի հետ կոալիցիա կազմելու մի քանի տարբերակ մամուլն արդեն շրջանառում է, սակայն գլխավոր ինտրիգը հինն է՝ կկազմի՞ արդյոք ՀՀԿ-ն կոալիցիա ԲՀԿ-ի հետ: Վերջինս դժվարին ընտրություն պետք է անի, հնարավոր է, որ նախագահական ընտրություններին ընդառաջ՝ ԲՀԿ-ն ուզենա ընդդիմադիրի իր կեցվածքը մասամբ պահպանել եւ կոալիցիա չկազմել՝ ողջ պատասխանատվությունը ՀՀԿ-ի վրա դնելով: Այս մասին առանձին կխոսենք, մանավանդ՝ առաջիկա երկու-երեք օրը շատ բան կհստակվի: Առայժմ մոտակա ինտրիգը նոր կառավարությանը, նոր վարչապետին են վերաբերում, մանավանդ որ մամուլը վարչապետացու բազմաթիվ անուններ է շրջանառում՝ այժմյան վարչապետին «ուղարկելով» Ազգային ժողովի նախագահ:

Կոալիցիայի հնարավոր տարբերակների եւ նոր կառավարության կազմի վերաբերյալ մեր տեսակետները եւս կներկայացնենք:

### ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏՈՒՄ

## Վերականգնվել է 9 մլրդ դրամ

**Կառավարությունում երեկ ներկայացվեց ֆինանսների նախարարության՝ ՀՀ պետբյուջեի կատարման նկատմամբ հսկողության 2011 թ. տարեկան արդյունքների հաշվետվությունը: Նախարարության աշխատակազմի ֆինանսական վերահսկողության տեսչությունն իրականացրած 112 ստուգումով 2008-2011-ին վերականգնվել է 9 մլրդ դրամ եւ վերաձեւակերպվել 2,3 մլրդ դրամ:**

## Անապահով խավի համար գազի գինը կսուբսիդավորվի եւս մեկ տարի

**2012-ի ապրիլի 1-ից մինչեւ 2013-ի մարտի 31-ի ժամանակահատվածի համար կառավարությունը կշարունակի պետության կողմից անապահով ընտանիքների սպառած բնական գազի մասնակի փոխհատուցման քաղաքականությունը: Մասնավորապես, «Հայռուսգազարդի» նշած ժամանակաշրջանում անապահով ընտանիքներից 300 խմ բնական գազի քանակության համար վճարումը գանձվելու է հաստատված սակագնից շուրջ 30 տոկոսով կամ 1000 խմ-ի համար՝ 32 հազար դրամի չափով ավելի պակաս: Վարչապետ Տիգրան Սարգսյանն այս կապակցությամբ ասաց, որ սոցիալապես անապահով խավերն, ըստ էության, չեն զգացել գազի թանկացումը, քանի որ մինչեւ 300 խմ գազի սպառման դեպքում նրանց համար գազի գինը պահպանվել է 100 դրամ: «Եվ մեկ տարով եւս երկարաձգելով այս օժանդակությունը՝ մենք փաստորեն մեղմում ենք սոցիալական բացասական ազդեցությունը, որ կարող էին զգալ անապահով ընտանիքները», նշեց նա:**

## Անօթեւանների շենքը Մարալիկում կառուցվել է

**Հայաստանի պետական բյուջեի միջոցներով Շիրակի մարզի Մարալիկ քաղաքի Շիրակի փողոցի թ. 25, 33, 34 շենքերի կառուցումն ավարտին է հասցվել: Դրանք նախատեսված են անօթեւան միայնակ տարեցների համար: Կառավարության երեկվա որոշմամբ այդ շենքերը գրանցվել են որպես պետական սեփականություն, որպեսզի հետագայում սահմանված կարգով տրամադրվեն անօթեւան միայնակ տարեցներին եւ բնակարանի կարիք ունեցող սոցիալական այլ խմբերին պատկանող անձանց: Մեկ այլ որոշմամբ գումար է տրամադրվել նշված բնակարանները կահավորելու նպատակով 59 լրակազմ գույքը Երեւանից Մարալիկ տեղափոխելու համար: «Սոցիալական բնակարանային ֆոնդը մենք հետեւողականորեն ձեւավորում ենք: Մոտակա 3-4 տարվա ընթացքում աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը կունենա բավական պատշաճ բնակարանային ֆոնդ եւ կկարողանա լուծել սոցիալական խնդիրները», ասաց վարչապետ Տիգրան Սարգսյանը:**

## Արդարադատության նախարարության շենքը կնորոգի մասնավորը

**Երեւանի Զաքյան փողոցի թ. 2 հասցեում գտնվող վթարային վիճակում գտնվող շենքը երեկ կառավարության որոշմամբ տրվեց «ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին: Շենքի առաջին հարկը եւ նկուղը սեփականության իրավունքով կտրամադրվեն շինարարական կազմակերպությանը որպես նշված շինության հիմնանորոգման փոխհատուցում: Որոշման համաձայն շենքն ամբողջությամբ կնորոգվի առանց պետբյուջեի լրացուցիչ ծախսի, դրա երկրորդ, երրորդ եւ չորրորդ հարկերում կտեղակայվեն ՀՀ փաստաբանների պալատը, հանրային պաշտպանի գրասենյակը, ինչպես նաեւ փաստաբանական դպրոցը:**

## Արթուր Գրիգորյանը չի տխրի, եթե նախարար չլինի

**Հարցին, թե կշարունակի՞ պաշտոնավարել, աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Արթուր Գրիգորյանը երեկ պատասխանեց, որ չի կարող այդ հարցին պատասխանել, «մինչեւ չձեւավորվի համապատասխան կոալիցիա», ավելացնելով, որ ամսի 31-ից հետո կերեւա: Միաժամանակ, նա նշեց, որ դեռեւս չի կարող ասել՝ կոալիցիա կձեւավորվի՞, թե՞ ոչ: Իսկ հնարավո՞ր է, որ Արթուր Գրիգորյանը դառնա հանրապետական կամ անկուսակցական՝ նա բացասական պատասխան տվեց, ավելացնելով, որ չի տխրի, եթե նախարարի պաշտոնը նրան չվստահվի: «Առաջարկ կլինի՝ կաշխատեմ, չի լինի՝ շնորհակալություն, ցտեսություն», ասաց նախարարը: Նա նաեւ գոհունակություն հայտնեց ընտրությունների արդյունքներից, քանի որ ԲՀԿ-ն 2007-ի խորհրդարանական ընտրությունների համեմատ կրկնակի քվեներ է ստացել:**

Ա. Ս.

## 8 քրեական գործ՝ ընտրախախտումների հետ կապված

Հայաստանի գլխավոր դատախազությունը երեկ տեղեկություն էր տարածել ընտրախախտումների հիման վրա հարուցված 8 քրեական գործի մասին. ապրիլի 15-ին Սվաճյան փողոցում Գայանե Առուստամյանին ծեծելու փաստով՝ նրա իսկ հաղորդման հիման վրա (ծեծվել էր նաեւ պատգամավորության թեկնածու Բաբկեն Գարոյանը), նախաքննություն է իրականացվում, «Լրագիր» կայքի նյութի հիման վրա՝ ոստիկանության աշխատակցին ծեծելու փաստի առթիվ, 148 դպրոցում (4/27 տեղամասում) ԲՀԿ -ի օգտին ընտրակաշառք բաժանելու մեղադրանքով: Այս գործով Արմեն Մաթեւոսյանի հանդեպ է նախաքննություն է իրականացվում: Նույն տիպի գործ էլ թիվ 12 ընտրատարածքում Լյովա Խաչատրյանի եւ ԲՀԿ-ի օգտին քվեարկելու համար ընտրակաշառք առաջարկելու հարցով է քննվում: «Ազատություն» ռադիոկայանի լրագրող Էլինա Չիլինգարյանի մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու վերաբերյալ եւս քրեական գործ է հարուցվել: Նույն տիպի գործ էլ հարուցված է Գյումրիի քաղաքապետի որդու կողմից «Կենտրոնի» օպերատորից խլված տեսախցիկի փաստով: Նույն ձեռագրով մի ուրիշ գործ էլի Գյումրիում է տեղի ունեցել, այս անգամ «Մաքսինֆո»-ի լրագրողի հանդեպ, սա եւս քննվում է:

Ս. Խ.

# Հակաֆաշիստական տոնին՝ ֆաշիստական վերաբերմունք

Ադրբեջանում էլ «նշվեց» ֆաշիզմի դեմ հաղթանակի 67-րդ տարեդարձը: Բաքվում, սակայն, վաղուց Հայրենական մեծ պատերազմում զոհվածների հուշակոթող չկա: Այդ իսկ պատճառով Իլհամ Ալիեւը «հարգանքի տուրք է մատուցել Հազի Ասլանովի հուշարձանին»: Հակաֆաշիստական տոնին, այսպիսով, հարեւան հանրապետության իշխող վարչախումբը դրսեւորել է ընդգծված ֆաշիստական կեցվածք: Նա առանձնացրել է Հայրենական մեծ պատերազմում ԽՍՀՄ հերոսի կոչման արժանացած՝ ազգությամբ ադրբեջանցուն: Այդ կերպ Իլհամ Ալիեւը պղծել է Ադրբեջանական ԽՍՀ-ից զորակոչված, բայց ազգությամբ ոչ ադրբեջանցի հարյուրհազարավորների հիշատակը:

Դա լիովին «տեղավորվում է» Ադրբեջանի պետական քաղաքականության «հայեցակարգի» շրջանակներում: Այն է՝ յուրացնել, ադրբեջանականացնել այն ամենը եւ բոլորին, որ ստեղծվել է Ադր. ԽՍՀ-ում, ովքեր գործել են այդ խորհրդային հանրապետության անունից: Պատահական չէ, որ 1987թ. դեռեւս խորհրդային Ադրբեջանում արգելվել է Հայրենական մեծ պատերազմում զոհվածների հուշարձան կանգնեցնել Դաշքեսանի շրջանի հայկական Բանանց գյուղում, իսկ Շամխորի շրջանի Չարդախլու գյուղում ավերվել է Փառքի թանգարանը:

Արդեն ղարաբաղյան օրերին Կիրովաբադում ջարդվել, ապամոնտաժվել է ԽՍՀՄ մարշալ, Խորհրդային Միության կրկնակի հերոս Հովհաննես Բաղրամյանի կիսանդրին: Նույն ճակատագրին է արժանացել ԽՍՀՄ կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանի կիսանդրին Շուշիում: Փաստացի ջարդարարությանը հաջորդել է քաղաքականը: Նույնիսկ ֆաշիզմի դեմ խորհրդային ժողովուրդների տարած հաղթանակի տոնն է Ադրբեջանում «ազգայնացվում»: Մամուլի բազմաթիվ հրապարակումներում անընդմեջ շեշտվում է «ադրբեջանական նավթագործների հերոսական աշխատանքը, որի շնորհիվ ապահովվել է ռազմական տեխնիկայի սպառած վառելիքի շուրջ 80 տոկոսը»:

Կարծես թե Բաքվի նավթահանքերում միայն ադրբեջանցիներ են երեք հերթափոխով աշխատել: Ոչ մի խոսք այն տասնյակհազարավոր այլազգի մասնագետների մասին, որ Բաքու էին գործուղվել ԽՍՀՄ ամենատարբեր ծայրերից: Ոչ մի խոսք ռազմաճակատ մեկնած եւ իրենց հերոսությամբ պսակած այլազգիների մասին: Ոչ մի խոսք այն մասին, որ Հայրենական մեծ պատերազմի տարիներին Արցախից գործող բանակ է զորակոչվել 44 000 հոգի՝ արական բնակչության կեսից ավելին: Նրանցից ուղիղ 22000-ը զոհվել է: Եվ դա այն դեպքում, երբ, ըստ վիճակագրության, Ադր. ԽՍՀ բնակչության ընդամենը 20 տոկոսն է ենթարկվել զորակոչի: Այդ է պատճառը, որ Արցախի բնակչությունը նախապատերազմական մակարդակին է հասել միայն... 1979թ., ֆաշիզմի դեմ տարած հաղթանակից երեքուկես տասնամյակ անց: Հայրենական մեծ պատերազմում ժողովրդագրական նման աղետի ենթարկվել են միայն ֆաշիստական օկուպացիայի մասնված ժողովուրդները:

Այս իմաստով մայիսի 9-ի տոնն Արցախի համար նաեւ ադրբեջանական ֆաշիզմի դեմ տարած հաղթանակն է խորհրդանշում: Ադրբեջանական իշխանությունների կողմից մայիսի 9-ին դրսեւորած ֆաշիստական վարքը դրա անառարկելի վկայությունն է:

Վ. Ա.

# Ադրբեջանցիները չմասնակցեցին Մեծ հաղթանակի տոնակատարությանը



Մայիսի 9-ին Պրահայի Օլշանսկի գերեզմանատան Անհայտ զինվորի հուշահամալիրում տեղի ունեցավ Երկրորդ համաշխարհային պատերազմում ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի 67-ամյակին նվիրված հանդիսավոր միջոցառում, որին մասնակցեցին Չեխիայի նախագահի վարչակազմի, խորհրդարանի եւ կառավարության բարձրաստիճան ղեկավարներ, զինվորականներ, ինչպես նաեւ Չեխիայում հավատարմագրված մի շարք երկրների դեսպաններ: Հայաստանի Հանրապետության անունից ծաղկեպսակ դրեց Չեխիայում ՀՀ դեսպան **Տիգրան Սեյրանյանը**: Հետաքրքրական է, որ արդեն երկու տարի անընդմեջ այս միջոցառմանը հրաժարվում է մասնակցել Չեխիայում Ադրբեջանի դեսպանությունը: Ըստ երեւույթին ադրբեջանական կողմն այս հարցում նույնպես տառապում է երկակի բարդույթով: Նախ, որ հայերն այս օրերին տոնում են Շուշիի ազատագրումը եւ Արցախի բանակի կազմավորումը, եւ երկրորդ, ըստ մեր աղբյուրների, նրանց չի գոհացրել այն հանգամանքը, որ լատինական այբուբենի համաձայն հուշարձանին ծաղկեպսակ պետք է դնեն նախ հայերը, հետո իրենք: Ամեն դեպքում, Հայաստանի դեսպանի եւ հյուպատոսի կողմից ծաղկեպսակի զետեղումից հետո հնչեց Հայաստանի օրհներգը:

Օգտվելով առիթից, Հայաստանի դեսպանին խնդրեցինք մեկնաբանել օրվա խորհուրդը: «Այսօր ոչ միայն տոնում ենք Երկրորդ համաշխարհային պատերազմում նախկին խորհրդային ժողովուրդների տարած մեծ հաղթանակը, այլեւ Շուշիի ազատագրման եւ ԼՂՀ պաշտպանության բանակի կազմավորման 20-ամյակները: Հին ու նոր հաղթանակները տոնում ենք նույն զգացումով ու հպարտությամբ», ասաց դեսպան Տիգրան Սեյրանյանը:

«Օրեր ամսագիր», Պրահա

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

# Կառավարումը պահանջում է համակարգված մոտեցում եւ կորպորատիվ պատասխանատվություն

*ՎիվաՍել-ՄՏՍ-ն Առաջնորդների դպրոցի ուսանողներին է ներկայացրել շուկայում մրցունակ մնալու եւ առաջնորդելու հմտությունները*



ՎիվաՍել-ՄՏՍ-ն՝ «ՄՏՍ» ԲԲԸ դուստր ձեռնարկությունը, տեղեկացնում է, որ կառավարման իր մոդելը շարունակում է օրինակ ծառայել ապագա մասնագետների համար, ովքեր տեսական գիտելիքը գործնականով հարստացնելու հարցում արդյունավետ են համարում Հայաստանում հեռահաղորդակցության առաջատար օպերատորի՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ի կառավարման փորձը: Ընդօրինակման հետաքրքրությունը մեր երկրում գործարար կառավարման մոդելի հանդեպ է:

«Աշխատանքային առողջ միջավայր, նոր չափանիշ սահմանելու համարձակություն, բարոյական արժեքներով առաջնորդվելու կամք, պատասխանատվություն եւ արդյունքի հասնելու հետեւողականություն. մոտավորապես այսպիսին պետք է լինի այն կազմակերպության ռազմավարությունը, որը ձգտում է լինել առաջատար եւ առաջնորդել իր օրինակով: Այդ ամենի հիմքում, սակայն, պետք է լինի ոչ միայն սպառողի, այլեւ ամբողջ հասարակության հանդեպ պատասխանատվությունը»,-Առաջնորդների դպրոցի ուսանողներին հուշել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն **Ռալֆ Յիրիկյանը**:

ՎիվաՍել-ՄՏՍ-ն կառավարման գործիքների ընտրության հարցում կարեւոր է համարում աշխատակիցների մասնագիտական իրական հնարավորությունների բացահայտումը եւ ղեկավարի՝ նրանց դերը գնահատելու կարողությունը: Ապագա մասնագետների հետ հանդիպման ընթացքում ներկայացվել է կառավարման համակարգված մոտեցման առավելությունը:

# Թուրքիան դեմ է ՆԱՏՕ-ի ժողովին Իսրայելի մասնակցությանը

Իսրայելական «Հաարեց» թերթում Զվի Բարելը տեղեկացնում է, որ Թուրքիան դեմ է Իսրայելի մասնակցությանը մայիսի 20-ին Չիկագոյում կայանալիք ՆԱՏՕ-ի գագաթաժողովին, որովհետեւ ցարդ Իսրայելի կառավարությունը ներողություն չի խնդրել Թուրքիայից 2010 թվի հունիսին «Մավի Մարմարա» նավի հետ կապված միջադեպի առթիվ:

«Իսրայելի մասնակցության վերաբերյալ խոսք լինել չի կարող, մինչեւ այդ երկրի կառավարությունը ներողություն չխնդրի եւ փոխհատուցում չվճարի միջազգային ջրերում այդ միջադեպի զոհերի համար: Մենք չենք կարող գործընկեր կոչել այն երկիրը, որի բանակը իշխանությունների հրամանով մեր զինվորներին է սպանել», ասել է Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն ՆԱՏՕ-ի հերթական ժողովի ժամանակ:

Թուրքիայի նման կեցվածքը հավասարազոր է վետոյի եւ պարտավորեցնող ՆԱՏՕ-ի բոլոր անդամ պետությունների համար: Մ. Նահանգները, Ֆրանսիան, այլ պետություններ եւ նույնիսկ գլխավոր քարտուղար Անդերս Ֆոգ Ռասմուսենն անձամբ խնդրել են Թուրքիային՝ վերանայել դիրքորոշումը, եւ նույնիսկ սպառնացել, որ իրենք էլ իրենց հերթին դեմ կլինեն Եգիպտոսի, Մարոկկոյի, Մավրիտանիայի, Ալժիրի եւ այլ ոչ անդամ պետությունների մասնակցությանը «Միջերկրականյան երկխոսություն» անվան տակ անցկացվող գագաթաժողովին, սակայն Թուրքիան անհողդողդ է մնացել:

Թուրքիան սրանից առաջ էլ մեկ այլ առիթով դարձյալ դեմ էր եղել Իսրայելի մասնակցությանը միեւնույն պատճառաբանությամբ: Ջանքերը՝ ուղղված երկու երկրների հարաբերությունների նորմալացմանը, առայժմ արդյունավետ չեն: Քաղաքագետների կարծիքով, այդ հարաբերությունների վատթարացումից Իսրայելն ավելի շատ է տուժել, քան Թուրքիան, որի հեղինակությունը բարձրացել է Սիրիայի Բաշար Ասադի դեմ որդեգրած իր ընդդիմադիր կեցվածքի շնորհիվ:

Հ. Ծ.

# Ադրբեջանականը՝ Երեւանում

Մայիսի 8-ի լույս 9-ի գիշերը, այսինքն ճիշտ այն ժամանակ, երբ ուղիղ քսան տարի առաջ ազատագրվեց հինավուրց Շուշին, մայրաքաղաքի փողոցներից մեկում, գետնի վրա՝ ասֆալտին «ինչ-որ մեկը» կամ «մի խումբ», նկարել է Ադրբեջանի պետական դրոշը:

Մենք դեռ կխոսենք, թե այս իրադարձությունը ինչ «քաղաքական-հոգեբանական» վերլուծության հիմք է հանդիսացել ադրբեջանցի վերլուծաբաններից մեկի համար, առայժմ՝ մեկ-երկու այլ դիտարկումներ:

Ո՞ւմ է պետք նկարել ադրբեջանական դրոշը մեր փողոցում: Ավելի ճիշտ՝ ո՞վ դա կարող է անել: Հիշեցնենք, ամիսներ առաջ տեղեկատվական ցանցում հայտնվեց մի լուր, թե մայրաքաղաքի փողոցներում նկատել են Ադրբեջանի պետական համարանիշներով մեքենա... Եթե շատ տուրք տանք անհավանականության տեսությանը, ապա մի՞թե հնարավոր չէ, որ ոմն ադրբեջանցի, ադրբեջանական պետհամարանիշներով մեքենայով, ասենք, Իրանի տարածքով ամիսներ առաջ մտել է Հայաստան, մեր երկրում «որոշ գործողություն ծավալել», գուցե գործընկերներ ձեռք բերել, եթե չի ունեցել, ու ահա մայիսի 8-ի լույս 9-ի գիշերը փողոցում նկարել իր երկրի դրոշն ու հեռացել:

Չնայած մենք սա որպես անհավանականության տեսություն ենք ներկայացնում, բայց մի՞թե սա հնարավոր չէ: Տեսեք, ո՞վ եւ ինչպե՞ս է վերահսկում Իրանից ու Թուրքիայից, Իրանի ու Թուրքիայի անձնագրերով ազգությամբ ադրբեջանցու ներթափանցումը մեր երկիր. ոչ ոք: Արդյոք այս երկու իրադարձությունները չե՞ն մտահոգում մեր ազգային անվտանգությանն ու ուժային կառույցներին առհասարակ, քանի որ հարցն անմիջականորեն նրանց իրավասության տակ է, եւ վերջապես, ո՞ւմ է պետք նկարել ադրբեջանական դրոշը մեր փողոցում եւ կամ ո՞վ դա կարող է անել: Հա՞յը, կրկին «անհավանականության տեսությունից» ելնելով, նկատենք, որ հնարավոր է: Բայց միայն այն պարագայում, երբ այս հայ մարդը այնքան է հոգնել իրականությունից, սեփական վիճակից, ու այնքան է լսել համեմատություններ ՀՀ քաղաքացու դրության ու ադրբեջանա-թուրքական ցեղասպանությունների միջեւ, որ ահա մարդը որոշել է նկարել ադրբեջանական դրոշն ու այդպիսով ցուցադրել իր դիրքորոշումը՝ «Սա Ադրբեջանն է», կամ՝ «Դուք Ադրբեջանից վերան եք»:

Բայց սա այսպես կարող էր լինել որեւէ այլ օր, բացի մայիսի 8-ի լույս 9-ի գիշերից. Ադրբեջանի դրոշի «երեւանյան ցուցադրությունը» Շուշիի ազատագրման օրը կանխամտածված քայլ է, անհայս մեկ կամ անհայս խմբի կողմից: Սա հստակ դիտավորություն է կամ հենց ադրբեջանցու, կամ ադրբեջանական կազմակերպությունների հետ աշխատողի(ների) կողմից: Ու եթե սա այսպես է, ուրեմն իրադարձությունն այս չի կարող անարձագանք մնալ:

Օրեր առաջ մանկապարտեզներից մեկում մի փոքրիկ տղա կարմիր, սպիտակ ու կապույտ կավիճներով գետնին նկարեց Ֆրանսիայի դրոշը, այդ օրից մի քանի օր առաջ Ֆրանսիայի Սենատը քրեական պատիժ էր սահմանել Հայոց ցեղասպանությունը Ֆրանսիայում հերքողների համար: Հետեւաբար փոքրիկ տղայի նկարը հասկանալի էր: Սակայն ադրբեջանական դրոշը Բաքվի քամիներն են անգամ ցած գցում, ուր մնաց հասկանանք նրանց ներկայությունը Երեւանում:

Ինչ վերաբերում է ադրբեջանցի վերլուծաբանի՝ «քաղաքական-հոգեբանական» վերլուծությանը, ապա նշենք միայն, որ Vesti.az-ի մեկնաբանը հանգել է հետեւյալ եզրակացության. «Ադրբեջանական դրոշի պատկերը Երեւանի փողոցում ցույց է տալիս, որ Հայաստանում խելամիտ մարդկանց թիվն աճել է»: Փաստորեն, երբ ադրբեջանական քաղաքների օդանավակայաններն ու կայարանները չեն ընդունում մարդկանց, որոնք հայկական ծագում ունեն, սա միայն ցույց է տալիս, որ Ադրբեջանում խելամիտ մարդիկ չկա՞ն:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

# Գյումրի. Տեխնոպարկի շենքի շինաշխատանքները սկսվել են

Ապրիլի 29-ից պաշտոնապես մեկնարկել են Գյումրու տեխնոպարկի հիմնական շենքի շինարարական աշխատանքները: Խոսքը վերաբերում է Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի երկրաշարժից փլված նախկին շենքին, որը հատկացվել եւ վերակառուցումից հետո ծառայելու է այդ նպատակին: Շինարարության մեկնարկը տրվել է հանդիսավոր արարողությամբ, նաեւ համագործակցության հուշագիր է ստորագրվել տեխնոպարկի գործունեության իրականացման ծրագրի համակարգող ՀՀ էկոնոմիկայի նախարարության ու «Դ-Լինկ ինտերնեշընլ» ընկերության միջեւ՝ այստեղ հետազոտությունների կենտրոնի հիմնադրման մասին:

Թե ինչ է տեխնոպարկը եւ ինչ է տալու իր երբեմնի տնտեսական ներուժը վաղուց կորցրած ու դրանից այդպես էլ ուշքի չեկող Գյումրուն, այստեղ նույնիսկ գործին առնչվողներից դժվար թե շատ մարդ կարողանա պատասխանել: Այդուհանդերձ, 2008 թ. հունիսի 12-ից ի վեր, երբ ՀՀ կառավարությունն իր արտագնա նիստում կայացրած որոշումներից մեկով հավանություն տվեց Գյումրին տեխնոքաղաքի վերածելու հայեցակարգին, ամեն տարի հաստատվել ու շրջանառվել են վերջինիս հիմնական բաղադրիչ տեխնոպարկի ստեղծման եւ գործունեության իրականացման կառավարական ծրագրեր ու միջոցառումներ, նախատեսվել եւ ծախսվել են բյուջեի միջոցներ: Իսկ այս տարի, անցած նախընտրական ապրիլ ամսվա ընթացքում, գործադիրը նույնիսկ երկու անգամ է անդրադարձել Գյումրու տեխնոպարկին, կայացրել երեք որոշում, այդ թվում հաստատել նրա գործունեության 2012 թ. ծրագիրը: Վերջինիս իրականացման համար հատկացվել է 163 մլն դրամ:

Կառավարության բնորոշմամբ, տեխնոպարկի ծրագրի հիմնական նպատակն է թափ հաղորդել Գյումրին տեխնոքաղաքի վերակառուցելու հավակնոտ ծրագրին՝ պահպանելով նրա ավանդական մշակութային նկարագիրը, այն դարձնել ժամանակակից գիտելիքային եւ նորամուծական ենթակառուցվածքներ ունեցող կենտրոն, որտեղ ներկայացված կլինեն բարձր տեխնոլոգիաներ կիրառող կազմակերպությունները, խոշոր կրթօջախներն ու գիտահետազոտական կենտրոնները: Ենթադրվում է, որ տեխնոպարկը հանդես կգա փոքր եւ միջին բիզնեսի ինկուբատորի դերում, որը կզբաղվի գիտատար արտադրությամբ: Հաշվի առնելով մարզի կրթական եւ մշակութային առանձնահատկությունները եւ այստեղ զբաղվածության ապահովման խնդիրը, կառավարությունը մտադիր է Գյումրի քաղաքում խթանել զբոսաշրջության, ՏՏ տեխնոլոգիաների, ճարտարագիտության, նորաձեւության, տեքստիլ արդյունաբերության, արվեստների, ոսկեգործության, արհեստագործության տարբեր ճյուղերի զարգացումը...

Պատասխանատուների հավաստմամբ, արդեն գործում են տեխնոպարկի գլխավոր օպերատոր «Գյումրու տնտեսական զարգացման հիմնադրամի» մասնակցությամբ ստեղծված երկու ընկերություններ, ճարտարագիտական եւ հետազոտական լաբորատորիաներ: Անցկացվում է բիզնես գաղափարների մրցույթ, անցյալ տարի հաղթող ճանաչված 3 նախագծերը ֆինանսավորվել են: Դրանցից մեկը հիբրիդային՝ գազի եւ արեւային ջեռուցման համակարգի նախագծումն ու պատրաստումն է, որը, հիմնադրամի տնօրեն Գուրգեն Պառնյանի վկայությամբ, ապահովում է գազի ծախսի տարեկան մինչեւ 30 տոկոս խնայողություն: Մյուս երկուսը ոսկերչական եւ այլ ինդուստրիալ իրերի թվային նախատիպերի նախագծումն ու կոշտ նախատիպերի արտադրությունն է, գեղազարդ իրերի գեղարվեստական նախագծումը, եռաչափ մոդելավորումը եւ մոմից մոդելների պատրաստումն ու թողարկումը: Գյումրիում նորարարական գործարարությունը խթանելու նպատակով այս տարի մրցույթով կընտրվեն եւս մինչեւ 4 գաղափարներ կամ ծրագրեր, դրանց հեղինակների հետ կստեղծվեն համատեղ ընկերություններ:

Ըստ էկոնոմիկայի նախարարության տեղեկատվության, տեխնոպարկի հիմնական շենքի շինարարական եւ վերանորոգման աշխատանքների արդյունքով 2 տարվա ընթացքում կստեղծվի շուրջ 6300 քառ. մետր մակերեսով ամբողջական համալիր, որը, պահպանելով արտաքին պատմամշակութային տեսքը, կներառի տեխնոլոգիական ընկերությունների համար ժամանակակից, բարձրորակ ենթակառուցվածքներով հագեցած գրասենյակային եւ ընդհանուր օգտագործման տարածքներ, ուսուցման եւ գիտահետազոտական լաբորատորիաներ ու լսարաններ, գործարար հանդիպումների համար նախատեսված սենյակներ: Գ. Պառնյանի տեղեկացմամբ՝ այստեղ կարող է աշխատել մինչեւ 300-350 մարդ: Գյումրու այս տեխնոլոգիական կենտրոնի հիմնանորոգման ծրագիրն իրականացվելու է հիշյալ նախարարության կողմից՝ Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի միջոցով: Շենքի շինանորոգման աշխատանքներն իրականացվում են ՀՀ կառավարության Համաշխարհային բանկի կողմից «Էլեկտրոնային հասարակությունը եւ նորարարությունը մրցունակության խթանման համար» վարկային համաձայնագրի շրջանակում տրամադրվող միջոցներով: Շինարարությունն իրականացնում է մրցույթում հաղթող ճանաչված «Բաղրամյանշին» եւ «Ախուրյանի կոոպշին» ընկերությունների համատեղ ձեռնարկությունը՝ մոտ 1,7 մլրդ դրամ (4,4 մլն դոլար) պայմանագրային արժեքով:

Գյումրու Գայի փողոցում, տեխնոպարկի հիմնական շենքի հարեւանությամբ գտնվող նախկին մարզադահլիճն ու կից հողամասն անհատույց օգտագործման իրավունքով, 15 տարի ժամկետով հանձնվել են ցանցային սարքեր արտադրող աշխարհի հինգ խոշորագույն ընկերություններից մեկին՝ «Դ-Լինկ ինտերնեշընլ» ընկերությանը, որը ցանկություն է հայտնել այստեղ հիմնադրել ցանցային եւ հեռահաղորդակցության տեխնոլոգիաների հետազոտությունների ու մշակման կենտրոն: Ներդրումային ծրագրի համաձայն, կենտրոնի կառուցման համար ընկերությունը շուրջ 8,5 մլն ԱՄՆ դոլարի ներդրում է իրականացնելու եւ ապահովելու է 50-70 աշխատատեղի ստեղծում: Ընկերության հետ ստորագրված երկարաժամկետ համագործակցության հուշագրի համաձայն նաեւ կապահովվի կառուցվող կենտրոնի փոխգործակցությունը Գյումրու տեխնոպարկի հետ, այն դարձնելով վերջինիս անբաժանելի մասը:

Տեխնոլոգիական կենտրոնի շենքի եւ հետազոտական կենտրոնի կառուցման համար ենթադրվող ներդրումների գումարը միասին կազմում է 13 մլն դոլար: Ըստ փորձագիտական գնահատման, տեխնոպարկի ծրագիրն իրականություն դարձնելու համար անհրաժեշտ է եւս 40 մլն դոլարի ներդրում:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

# Աղանդավորները «գրոհում» են...

**Մեծ ջանքեր են անհրաժեշտ Հայաստանում գլուխ բարձրացրած աղանդավորական շարժումների դեմ պայքարելու եւ դրանք կանխելու համար: 3 մլն բնակչություն ունեցող Հայաստանում աղանդավորների թիվը կազմում է 300-400 հազար: Եթե համեմատություն տանենք Ռուսաստանի Դաշնության հետ, ապա կտեսնենք, որ 142 միլիոնանոց Ռուսաստանում աղանդների թիվը հասնում է 700-800 հազարի: Սա նշանակում է, որ Ռուսաստանը բնակչության թվով մեզանից շատ է գրեթե 50 անգամ, իսկ աղանդավորների քանակով՝ երկու անգամ:**

**Աղանդավորները մարդկանց խմբեր են, որոնք չեն ընդունում ավանդական եկեղեցու դավանանքը եւ քարոզում են իրենց առաջնորդի «հորինած» հակաեկեղեցական գաղափարները: Այսօր աղանդավորական խմբերից մեզանում առավել տարածված են հիսունականները կամ հոգեգալստականները, Եհովայի վկաները կամ եհովականները, մորմոնները, բապտիստները: Սրանցից յուրաքանչյուրը վտանգ է սպառնում ոչ միայն մեր եկեղեցուն, այլ նաեւ վտանգավոր է ազգային անվտանգության եւ պետության հիմքերը խարխլելու տեսանկյունից: Հետեւաբար սրանք ոչ այլ ինչ են, քան վերահաս աղետ Հայ առաքելական սուրբ եկեղեցու համար: Ինչո՞ւ, քանի որ նրանք բոլորը հետապնդում են քայքայիչ, կործանիչ նպատակներ: Նրանց մարտավարությունը տարբեր է, բայց նպատակը՝ մեկը: Տարբեր են նաեւ նրանց սկզբնապատճառները, թե ե՞րբ ու ինչի՞ համար են առաջացել, ինչո՞ւ են դեմ մեր պետական կրոնին կամ ինչքանո՞վ են դեմ եւ ի վերջո ի՞նչ սկզբունքներ ունեն: Փորձենք պարզաբանել.**

**Օրինակ՝ բապտիստները առաջացել են 17-րդ դարում: Բողոքականության մի տարատեսակ են, որոնք մկրտությունն ու հաղորդությունը համարում են սոսկ եկեղեցական կարգ, որը խորհրդավորություն չունի: Կնքվում են միայն մեծահասակները:**

**Մորմոնները չեն ընդունում քրիստոնեական խորհրդանիշները՝ համարելով, որ դրանք ստեղծել է ոչ թե Աստված, այլ մարդը: Այս աղանդը ստեղծել է Ժոզեֆ Սմիթը 1830-ին ԱՄՆ-ում:**

**Հիսունականները կամ հոգեգալստականները նույնպես առաջացել են ԱՄՆ-ում 19-20-րդ դարերում: Անվանումը կապված է Գործք առաքելոցում հիշվող Հոգեգալստյան տոնի հետ, երբ Սուրբ Հոգին առաքյալների վրա է իջել Քրիստոսի հարության հիսուներորդ օրը, ինչի շնորհիվ նրանք կարողացել են քարոզչություն իրականացնել օտարալեզու ժողովուրդների մեջ: Հայաստանում զանազան անուններով գործում են հիսունականների տարատեսակ խմբեր՝ Կյանքի խոսք, Ավետարանի հավատի քրիստոնյաներ եւ այլն: Հիսունականները չեն ընդունում քրիստոնեական եկեղեցու պաշտոնական ծեսերը, խաչը, սրբապատկերները: Աղանդներից մյուսը Եհովայի վկաներն են կամ եհովականները: Այս «երեւույթների» մասին փորձեմ ավելի հանգամանալից խոսել, քանզի սրանք ավելի ակտիվ են այսօր մեր երկրում ու «չխնայելով» իրենց, նույնիսկ կորցնելով որոշակի մարդկային բարոյական արժեքներ, «քարոզներ» են անում ամենուրեք՝ երթուղայիններում, բակերում, առեւտրի կենտրոններում, մարդկանց բնակարանների դռներից ու պատուհաններից կախված: Նրանք այսօր վարում են ակտիվ զոմբիացման գործընթաց եւ ռոբոտացնում են մարդկանց, ընդ որում այն մարդկանց, ովքեր գտնվում են սոցիալական, նյութական, հոգեկան անկայուն վիճակներում: Այս պարագայում նրանք շատ արագ ազդում են իրենց «զոհերի» հուզական վիճակի վրա, փորձում են իրենց առաջնորդների անիմաստ գաղափարներով կամ իրենց փոփոխած «Աստվածաշնչի» միջոցով մխիթարել այդ անմեղ մարդկանց եւ գցել ծուղակը: Իհարկե, հոգեբանական այդքան ընկճված մարդուն անհրաժեշտ է բավարար ուշադրություն եւ լավ վերաբերմունք, ինչը այդ պահին նա ստանում է «հոգատար» Եհովայի վկայից: Այս մեթոդով աստիճանաբար սառեցնում են մարդու ուղեղը եւ դարձնում իրենց իսկ նման ռոբոտ, որոնք նույն ճանապարհը անցել են մեկ ուրիշի զոհը դառնալով: Այս աղանդը հիմնադրվել է ԱՄՆ-ի Փենսիլվանիա նահանգում 1872-ին Չառլզ Ռասելի կողմից: Ընդունում են մեկ միասնական Աստծուն՝ միայն Եհովային, իսկ Քրիստոսին համարում են նրանից ծնված եւ նրա կամքը կատարող: Եհովականները չեն ընդունում սուրբ հոգուն իբրեւ Աստծու, մերժում են սուրբ խաչը, մկրտությունը: Ըստ եհովականների՝ երկրի վրա է գտնվում սատանայի թագավորությունը, եւ Եհովայի ու սատանայի ճակատամարտի հետեւանքով մարդկությունը կկործանվի իսկ եհովականները կմնան, եւ երկրի վրա կհաստատվի Աստծու թագավորությունը: Իհարկե, այս ամենը խեղկատակություն է, սակայն ոչ բոլորս ենք գիտակցում դա եւ, ցավոք, բռնում ենք մոլորության ուղին: Հետեւաբար պետք է լինել աչալուրջ եւ տեղեկացված, թույլ չտալ ոչ մի աղանդավորական շարժման ներթափանցումն ու տարածումը: Կարծում եմ, որ այս հարցում անհրաժեշտ է նաեւ որոշակի սահմանափակումներ դնել խոսքի եւ խղճի ազատության վրա: Բայց, այնուամենայնիվ, մեզանից յուրաքանչյուրի խնդիրն է թույլ չտալ նմանօրինակ զեղումներ, որը կթուլացնի Հայ առաքելական սուրբ եկեղեցու, ինչպես նաեւ պետության հիմքերը: Իսկ մեզ, վստահ եմ, պետք է ուժեղ Հայաստան: Դրա համար միայն թղթի վրա գրելը քիչ է, պետք է եկեղեցին մոտեցնել ժողովրդին, շատ աշխատել մարդկանց հետ եւ հեռու պահել աղանդները մեզանից, որոնք իրենց բիզնես ծրագրերով եւ քայքայիչ միտումներով ուղղված են պետության դեմ: Պետք է հստակ պատկերացնել, որ աղանդավորական շարժումների մեջ չկա ավելի մեղմ աղանդ կամ ավելի գեղեցիկ աղանդ, սրանք բոլորն էլ քայքայիչ են ու վտանգավոր, ուստի մեզանից յուրաքանչյուրի համար գերխնդիր պետք է լինի աղանդներին իրենց իսկական տեղը ցույց տալը եւ Հայ առաքելական սուրբ եկեղեցու արժանի զավակը լինելը:**

ՍՏԱԼ ՍԱՐԴԱՐՅԱՆ

ANSEF

# Ուղեղների հոսքը կասեցնելու առաքելությամբ

***Նյու-Յորքից վաստակաշատ լրագրողուհի Ֆլորենս Ավագյանն այս անգամ իր ապրիլի 26-ի հոդվածում անդրադարձել է ANSEF-ի գործունեությանը: Ստորեւ՝ համառոտ քաղվածքներ այդ հոդվածից:***

ANSEF-ը կամ հայերեն տարբերակով ԳԿՀԱՀ-ն՝ Գիտության եւ կրթության հայկական ազգային հիմնադրամը, գործում է Հայ օգնության ֆոնդի (ՀՕՖ) հովանավորության ներքո եւ ֆինանսական ու նյութական այլ միջոցներով փորձում է խթանել Հայաստանում տարվող գիտահետազոտական աշխատանքներն ու տեխնոլոգիական առաջընթացի քայլերը:

«Նրա առաքելությունն է պահպանել Հայաստանի ինտելեկտուալ հասարակությունը՝ պարգեւներ շնորհելով գիտության եւ տեխնոլոգիայի ասպարեզում աչքի ընկնող հետազոտությունների հեղինակներին», հեռախոսային խոսակցության ժամանակ նշել է ANSEF-ի հիմնադիրներից եւ դրա վարչական ու հետազոտական խորհրդի նախագահ դոկտ. **Երվանդ Թերզյանը**, որը դասավանդում է Կոռնել համալսարանի աստղագիտության եւ տիեզերաբանության ֆակուլտետում: Թերզյանը ծնվել է Ալեքսանդրիայում եւ հեղինակ է ավելի քան 230 գիտական հոդվածների: Նրա հավաստմամբ՝ իր գոյության 12 տարիների ընթացքում ANSEF-ը ընդհանուր առմամբ 1,4 միլիոն դոլար է շնորհել մի շարք գիտահետազոտական ոլորտի մասնագետների, որպեսզի նրանք կարողանան շարունակել իր ուսումնասիրությունները եւ չբռնեն արտասահման գաղթելու ճանապարհը:

ANSEF-ը դրամահավաք է կազմակերպում Մ. Նահանգներում եւ ընտրում համապատասխան արժանի թեկնածուներին: Առաջին տարում ներկայացված 86 թեկնածուներից 26 տոկոսը ստացել է դրամաշնորհ: Ներկայումս թեկնածուների թիվը անցնում է 200-ը: Ընտրությունը կատարվում է ամերիկացի եւ ամերիկահայ ականավոր գիտնականների կողմից, որոնք շաբաթական հանդիպումներում քննարկում են ներկայացված դիմումնագրերը:

«Անցյալ 12 տարիների ընթացքում լուրջ գիտական հոդվածներ են տպագրվել աշխարհի ավելի քան 700 գիտական հանդեսներում», ավելացրել է դոկտ. Երվանդ Թերզյանը: Դրանցից 49 տոկոսը ֆիզիկայի բնագավառին են պատկանում, 28 տոկոսը՝ բնական գիտությունների, իսկ 15 տոկոսը՝ ճարտարագիտական»:

«Բնական ռեսուրսներից զուրկ Հայաստանը ամենաշատը կարիք ունի պահպանելու իր մտավոր ռեսուրսը», ավելացրել է դարձյալ ANSEF-ի հիմնադիրներից, Բոստոնի համալսարանի նախկին նախագահ դոկտ. **Արամ Չոպանյանը**: «Դրանով է, որ մենք կարողանալու ենք կասեցնել ուղեղների հոսքը դեպի արտասահման»:

ANSEF-ը պատրաստվում է սեպտեմբերին Երեւանում նշել իր հաջողությունների 12-ամյա տարեդարձը:

Հ. Ծ.

# ՀՅԴ-ն՝ Օլանդին, ՌԱԿ-ը՝ Սարկոզիին

## *Մեկնաբանելով նախագահական ընտրությունները Ֆրանսիայում*

«Europe and Orient» (Եվրոպա եւ արեւելյան երկրներ) կազմակերպության եւ համանուն հանդեսի տնօրեն Վարուժան Սիրապյանը, մեկնաբանելով նախագահական ընտրությունները Ֆրանսիայում, Փարիզից հաղորդում է, որ ընտրությունների արդյունքները երբեք այդքան անորոշ չէին եղել այդ երկրում: «Սարկոզին 6 ամիս առաջ ընդամենը 16 տոկոս հնարավորությամբ սկսեց, եւ հստակ չէր, որ նա եզրափակիչ փուլ կհասնի, քանի որ քաղաքագետները ընդամենը 3-րդ տեղ էին նախատեսում նրան՝ Ֆրանսուա Օլանդից (սոցիալիստ) եւ Մարին Լը Պենից (ծայրահեղ աջակողմյան) հետո: Ապրիլի 22-ի առաջին փուլից հետո, սակայն, երկու թեկնածու էին մնացել՝ Սարկոզին եւ Օլանդը: Վերջին երկու շաբաթները չափազանց լարված էին, եւ երկու թեկնածուների հնարավորությունները գնալով մերձենում էին միմյանց:

Ֆրանսիայում թույլ չի տրվում սոցհարցումների տվյալներ հրապարակել վերջին 48 ժամերի ընթացքում, բայց համակարգիչների եւ սոցկայքերի ներկա ժամանակներում նման սահմանափակումը անիմաստ է թվում: Բելգիական եւ շվեյցարական կայքերը մայիսի 6-ին՝ ընտրատեղամասերի փակումից (ժամը 18.00-ին) ընդամենը մեկ րոպե անց հայտարարել են, որ Ֆրանսիայի հաջորդ նախագահը կլինի Ֆրանսուա Օլանդը ձայների 52 տոկոսով:

Ինչպես ակնկալվում էր, ժամը 20.00-ին Օլանդի նկարը երեւաց մեր բոլոր հեռուստատեսային կայանների էկրաններում որպես հաղթանակած թեկնածուի: Սարկոզին 20 րոպե անց ընդունելով իր պարտությունը՝ ելույթ ունեցավ ասելով, որ հաղթանակը թշնամի ճամբարինը չէ, այլ Ֆրանսիայինը, եւ մաղթեց, որ երկիրը պատվով անցնի իր առջեւ ծառացած փորձությունները:

Ֆրանսահայերը երկու մասի էին բաժանված: Դաշնակցությունը կոչ էր անում քվեարկել հօգուտ Օլանդի, ռամկավարները՝ հօգուտ Սարկոզիի: Շառլ Ազնավուրը, Ալեն Թերզյանը, միանալով Ֆրանսիայի գրողներին, մտավորականներին եւ դերասաններին (ինչպես օրինակ՝ Ժերար Դեպարդյեն), պայքարում էին հանուն Սարկոզիի:

Հիշեցնենք, որ երկու թեկնածուներն էլ ապրիլի 24-ին, իրարից անկախ, մասնակցեցին Փարիզում՝ Երեւանյան այգում կանգնեցված Կոմիտասի արձանի շրջակայքում անցկացվող 1915 թ.-ի Հայոց ցեղասպանության հիշատակի արարողություններին, երկուսն էլ հայտարարեցին, որ ընտրություններից հետո անհրաժեշտ քայլեր կձեռնարկեն ցեղասպանության ժխտումը քրեականացնելու օրենքը վավերացնելու ուղղությամբ», գրում է Սիրապյանը Փարիզից:

Հ. Ծ.

# Օլանդի ընտրության թուրքական արձագանքները

*1-ին էջից*

Նախկին դեսպան եւ Հայկական ուսումնասիրությունների ինստիտուտի տնօրեն Օմեր Էնգին Լյութեմը Ֆրանսիայի նախագահի պաշտոնում Օլանդի ընտրությանը թուրքական շրջանակների ցուցաբերած դրական մոտեցումը վերագրում է Սարկոզիի նկատմամբ վերջիններիս զայրույթին: Եվրասիական ուսումնասիրությունների կենտրոնի կայքէջում մայիսի 8-ին հրապարակած «Ֆրանսիայի նոր նախագահն ու հայերը» վերնագրով հոդվածում ահա թե ինչ է գրում **Լյութեմը**.

«Հետհայացք անդրադառնալով Օլանդի գործունեությանը կտեսնենք, որ նա գրեթե միշտ հայերի տեսակետներն է պաշտպանել: 2004-ին, երբ Օլանդը Սոցիալիստական կուսակցության գլխավոր քարտուղարն էր, Ֆրանսիայում Հայ հեղափոխական դաշնակցության ղեկավար Մուրադ Փափազյանի հետ (որն առայժմ նրա հատուկ խորհրդականն է) ստորագրել էր մի հայտարարություն, որտեղ Հայոց ցեղասպանության ճանաչումը ԵՄ-ի հետ անդամակցության բանակցությունների սկզբնավորման նախապայման էր համարվում Թուրքիայի համար: Հաջորդ տարիներին նա այցելել էր Երեւան եւ չէր զլացել Ցեղասպանության հուշարձանում հարգանքի տուրք մատուցել: Նախընտրական քարոզարշավի ժամանակ Օլանդն անվերապահորեն շարունակել էր զորակցել հայերին, իսկ ապրիլի 24-ին Փարիզում այցելել է Ցեղասպանության հուշարձանին ու այնտեղ ելույթ ունեցել:

Խնդրո առարկա քարոզարշավի ընթացքում Օլանդը հայերին խոստացել է.

1. Պաշտոնավարման առաջին ամիսներին ձգտելու է հասնել Սահմանադրական դատարանի մերժած ցեղասպանության ուրացումը քրեականացնող օրինագծի անցկացմանը:
2. Հայոց ցեղասպանության ճանաչումը որպես ԵՄ-ին անդամակցության նախապայման է առաջադրելու Թուրքիային:
3. Ցեղասպանության 100-րդ տարելիցին նպաստելու է Փարիզում պետական միջոցներով Հայոց ցեղասպանության թանգարանի կառուցմանը:
4. Ղարաբաղում պատերազմի վերսկսումը կանխելու վրա է բեւեռելու Ֆրանսիայի «հատուկ ուշադրությունը» (նախագահ Ալիեւի ուժի գործադրման մասին խոսքերը վերհիշելիս ակնհայտ է դառնում, որ Օլանդը Ղարաբաղի հարցում պատրաստվում է աջակցել Հայաստանին):

Չհաշված օրինագիծը, Նիկոլա Սարկոզին մնացած բոլոր հարցերում ձեռնպահ է եղել: Այդ առումով Օլանդը հայերի տված խոստումներում անհամեմատ գերազանցում է Սարկոզիին: Օլանդը միաժամանակ անհավանական էր համարել իր պաշտոնավարման տարիներին Թուրքիայի անդամակցությունը ԵՄ-ին: Դրանով հասկացրել էր, որ անդամակցության հարցում իր երկիրը շարունակելու է լինել Գերմանիայի կողքին: Այլ կերպ, Ֆրանսիայի նոր իշխանությունները ԵՄ-ի հետ բանակցություններում կբացեն մի քանի բաժիններ, փոխարենը կպահանջեն, որ Թուրքիան չառարկի այն խոստումների կատարմանը, որոնք հայերին տվել է Օլանդը: Սակայն սա «քիչ տալով շատ վերցնելու» միտում ունի, ուստի Թուրքիայի շահերին համապատասխան չէ»:

# Ինդոնեզիայում Superjet-100 օդանավը բախվել է լեռանը

Ցուցադրական թռիչքների նպատակով Ինդոնեզիա թռած ռուսական «Սուխոյ» ավիաշինական ընկերության Superjet-100 օդանավը մայիսի 9-ին մայրաքաղաք Ջակարտայի «Խալիմ» օդանավակայանից մեկնելուց որոշ ժամանակ անց անհետացել է ռադարների էկրաններից: Օդանավի հետ վերջին անգամ կապ է հաստատվել Մոսկվայի ժամանակով 11-ն անց 33 րոպեին: Այդ պահին օդանավը գտնվում էր Բոգոյի շրջանում՝ Ջակարտայից 100-120 կմ հեռավորության վրա:

Ֆրանսպրեսը հաղորդում է, որ կորած օդանավը որոնելու մեկնած ուղղաթիռներից մեկը մայիսի 10-ի առավոտյան դրա բեկորները հայտնաբերել է Սալակ լեռան շրջանում, 1817 մետր բարձրության վրա, ռադարի արձանագրած վերջին կետից 1,4 կմ հեռու:

ՌԻԱ գործակալությունը հաղորդում է, որ օդանավում ուղեւորների եւ անձնակազմի անդամների ընդհանուր թիվը եղել է 45: Նրանք բոլորը ապահովագրված են եղել «Ռոսգոսստրախ» ընկերությունում 300 մլն դոլար գումարով: 45 անձանցից որեւէ մեկը ողջ չի մնացել:

«Սուխոյ» ընկերության հրապարակած տվյալներով, ջախջախված օդանավի զոհերի մեջ կան 8 ռուսաստանցի, 1 ֆրանսիացի, ԱՄՆ քաղաքացի, 2 իտալուհի եւ ինդոնեզացիներ:

Superjet-100 մարդատար օդանավը պատկանում էր ռուսական «Աերոֆլոտ» ընկերությանը:

Ինդոնեզիայի հեռուստատեսությունը ցուցադրել է ռուսական օդանավի անկման վայրը: Դատելով ամեն ինչից՝ օդանավը բախվել է լեռանը: Տեղաբնակները տեսել են, թե ինչպես է «մեծ. սպիտակ օդանավը» ընկնում, եւ լսել են պայթյունի ձայն:

Superjet-100-ը մայիսի 9-ին Ինդոնեզիա էր ժամանել ցուցադրական թռիչքների շրջանակներում, որոնք ընդգրկում են ասիական 6 երկիր: Խոսքը Մյանմայի (Բիրմա), Պակիստանի, Ղազախստանի, Լաոսի, Վիետնամի եւ Ինդոնեզիայի մասին է, որտեղ ռուսները հույս ունեն գտնել իրենց արտադրանքի իրացման շուկաներ: Սակայն Superjet-100-ի վթարը կարող է ի դերեւ հանել նրանց ակնկալիքները:

ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆ

# Հուժկու պայթյուններ Դամասկոսում

## *Իշխանությունները մեղադրում են ընդդիմությանը*



**Մայիսի 10-ին Սիրիայի մայրաքաղաք Դամասկոսի հարավ-արեւմուտքում՝ ալ-Կազզազի շրջանում որոտացել է երկու հուժկու պայթյուն: Երկրի պետական հեռուստատեսության նախնական տվյալները վկայակոչելով՝ Ֆրանսպրեսը հաղորդում է առնվազն 40 սպանվածների եւ 170 վիրավորների մասին:**

**Հատուկ ծառայությունների շենքերի մոտ պայթեցվել են ականված ավտոմեքենաներ: BBC-ն հաղորդում է, որ պայթյուններից ավերվել են հատուկ ծառայությունների երկու հիմնական շենքերը:**

**Սիրիայի հեռուստատեսությունը ցուցադրել է պայթյուններից ծռմռված բազմաթիվ ավտոմեքենաներ եւ մարդկանց այրված դիակներ:**

**Պայթյունները տեղի են ունեցել վաղ առավոտյան, երբ ծառայողները գնում էին աշխատանքի, երեխաները՝ դպրոց:**

**«Ալ Մանար» հեռուստաալիքը նշում է, որ սաստիկ պայթյունների ցնցումները զգացվել են ամբողջ քաղաքում: Ահաբեկչություններից դժգոհ բնակիչները երեկ Դամասկոսի հրապարակներից մեկում կազմակերպել են հանրահավաք, որի ընթացքում իշխանություններից պահանջել են ահաբեկիչներից պաշտպանել խաղաղ բնակիչներին:**

**Նախօրեին Սիրիայում երկու ռումբ էր պայթեցվել դեպի Դերաա քաղաք շարժվող ՄԱԿ-ի դիտորդների եւ լրագրողների շարասյան ճանապարհին:**

**Երեկվա ահաբեկչությունների համար որեւէ խմբավորում պատասխանատվություն չի ստանձնել: Իշխանությունները մեղադրում են ընդդիմության հետ կապված զինյալներին: Երեկվա պայթյունները Դամասկոսում ամենից արյունալի ահաբեկչությունն են վերջին տարիներին:**

**Մայիսի 6-ին քաղաքում պայթյունից վիրավորվել էր երեք զինվոր: Ապրիլի վերջերին քաղաքի մզկիթներից մեկի մոտ մահապարտ ահաբեկիչը իրեն պայթեցնելով՝ սպանել էր 10 մարդու: Այդ ահաբեկչությունների պատասխանատվությունը ստանձնել էին տեղացի արմատական իսլամիստները:**

# Պուտինը չի մասնակցի «Մեծ ութնյակի» մայիսյան գագաթնաժողովին

**ՌԴ նորընտիր նախագահ Վլադիմիր Պուտինը չի մեկնի ԱՄՆ, որտեղ մայիսի 18-19-ին անցկացվելու է «Մեծ ութնյակի» հերթական գագաթնաժողովը: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը՝ վկայակոչելով Սպիտակ տան մամլո ծառայությանը: Քեմփ-Դեւիդում նախատեսված գագաթնաժողովում Ռուսաստանը կներկայացնի նորանշանակ վարչապետ Դմիտրի Մեդվեդեւը: Մայիսի 9-ին Վլադիմիր Պուտինը այդ մասին հայտնել է ԱՄՆ նախագահ Բարաք Օբամային:**

**«Վկայակոչելով ՌԴ կառավարության ձեւավորումն ավարտելու անհրաժեշտությունը, նախագահ Պուտինը ափսոսանք հայտնեց, որ ինքը չի կարողանա մասնակցել Քեմփ-Դեւիդի գագաթնաժողովին», ասվում է Սպիտակ տան մամլո ծառայության հաղորդագրության մեջ:**

**ՌԻԱ գործակալության տվյալներով, Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի նախագահները կկարողանան հանդիպել «Մեծ ութնյակի» հաջորդ գագաթնաժողովում, որը տեղի կունենա հունիսի 18-19-ին Մեքսիկայում: Իբրեւ ՌԴ նախագահ Պուտինն Օբամայի հետ կհանդիպի առաջին անգամ:**

# Օբաման՝ միասեռական ամուսնության կողմնակից

**ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման ABC հեռուստաալիքին տված հարցազրույցում հայտարարել է, որ, իր կարծիքով, ԱՄՆ-ը պետք է թույլատրի միասեռական ամուսնությունները:**

**Ռոյթեր գործակալությունը նշում է, որ Օբաման առաջին անգամ հրապարակավ արտահայտվում է միասեռական կապի օրինականացման օգտին: Նախագահը, սակայն, ընդգծել է, որ դա իր մասնավոր կարծիքն է եւ որ այդ հարցը օրենսդրական կարգով պետք է լուծվի նահանգների մակարդակով:**

**Մի քանի օր առաջ փոխնախագահ Ջո Բայդենն ասել էր, որ ինքը դեմ չէ միասեռական ամուսնություններին:**

**2011-ին փետրվարին Օբամայի վարչակազմը հայտարարել էր, որ չի խանգարի Ամուսնության պաշտպանության օրենքի փոփոխմանը, ըստ որի ամուսնությունը տղամարդու եւ կնոջ միությունն է:**

**Ներկայումս միասեռական ամուսնություններն օրինականացված են Այովայի, Վերմոնտի, Կոնեկտիկուտի, Նյու Հեմփշիրի, Մասաչուսեթսի, Նյու Յորքի նահանգներում եւ մայրաքաղաքային Կոլումբիա օկրուգում:**

# Թբիլիսիում նշվեց Մեծ հաղթանակի 67-րդ եւ Շուշիի ազատագրման 20-րդ տարեդարձը

Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտի 67-րդ եւ Շուշիի ազատագրման 20-րդ տարեդարձի տոնակատարությանն էր նվիրված մայիսի 9-ին, Հայ եկեղեցու Վիրահայոց թեմի «Հայարտուն» մշակույթի կենտրոնի նախաձեռնությամբ եւ Վրաստանում ՀՀ դեսպանության աջակցությամբ, Թբիլիսիի Նոդար Դումբաձեի անվան պատանի հանդիսատեսի թատրոնում կայացած ճոխ համերգը:

Դահլիճում պատվավոր տեղեր էին զբաղեցրել Վրաստանում ՀՀ դեսպան Հովհաննես Մանուկյանը, Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, Վրաստանի նախագահի խորհրդական, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, Հայրենական մեծ պատերազմի վետերաններ եւ Արցախյան հերոսամարտի մասնակիցներ:

Վիրահայոց թեմի Սամցխե-Ջավախքի տարածաշրջանի փոխանորդ տեր Բաբգեն Սալբիյանի օրհնությամբ, համերգին ներկա էր Ախալքալաքից ժամանած հայ երիտասարդների ստվար խումբ՝ տեղի Սուրբ Խաչ եկեղեցու հոգեւոր հովիվ Տեր Տաթեւի գլխավորությամբ:

Տոնական օրվա խորհրդին էր նվիրված պատմաբան **Ենոք Թադեւոսյանի** ելույթը, որն անդրադարձ էր Հայրենական մեծ պատերազմին հայերի մասնակցությանը եւ քաջագործություններին, Արցախի անկախության համար մղված ազատատենչ պատերազմին եւ Շուշիի ազատագրման հաղթարշավին:

Վիրահայոց թեմի «Հայարտուն» մշակույթի կենտրոնի Ներսես Շնորհալի երգի եւ երաժշտական գործիքների մանկական եւ ավագ համույթների (խմբավարներ՝ Մարի Աբուլյան եւ Մարիաննա Մամաջանովա), «Ջեյրան» պարի համույթի (պարուսույց Սվետլանա Երիցյան), համերգին հրավիրված «Անի» (պարուսույց Անգելինա Նազարյան-Քոչյան) եւ «Վանք» (պարուսույց՝ Լիանա Կաշավանիձե) պարի համույթների, անհատ կատարողներ Անահիտ Մկրտչյանի, Անահիտ Հարությունյանի, Աննա Պողոսովայի, Հենրիխ Պետրոսյանի եւ Հենրիխ Հարությունյանի ազգագրական եւ հայրենասիրական բոցաշունչ ելույթները դարձան հաղթական օրվա ազգայնաբույր եւ տոնական տրամադրության վառ դրսեւորում:

ՀՀ ազգային հերոս լեգենդար Մոնթե Մելքոնյանին նվիրված վավերագրական ֆիլմի ցուցադրումը վիրահայության խորհրդանշական խոնարհումն էր Արցախյան հերոսամարտում արծվասիրտ հայորդիների անմահ հիշատակի առջեւ:

Բոցաշունչ ելույթներից դահլիճում թեւածող հայրենասիրական ոգու եւ հաղթողի հպարտության վառ արտահայտություն դարձավ Ստեփանակերտի հետ ուղիղ միացումը: Համերգի վարող Լեւոն Չիդիլյանից ընդունելով վիրահայության շնորհավորանքը Շուշիի ազատագրման 20-ամյակի կապակցությամբ, Ստեփանակերտից վիրահայությանը միասնության, անկոտրում կամքի եւ բազում հաղթանակների բարեմաղթանքի խոսքեր ուղղեց Արցախի ազատամարտիկ, «Կարին» երգիպարի համույթի գեղարվեստական ղեկավար, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Գագիկ Գինոսյանը:

Մեծ Հաղթանակի 67-րդ տարեդարձի առթիվ, ՀՀ պաշտպանության նախարարի հրամանագրով, ծովակալ Իսակովի մեդալներով պարգեւատրված, Հայրենական պատերազմի թբիլիսահայ վետերաններ Գիորգի Մարկարյանին, Սերգեյ Միրզոյանին, Գիորգի Փանոսյանին, Սեդրակ Սահակյանին եւ Սիմոն Սիմոնյանին՝ պարգեւները փոխանցեց Վրաստանում ՀՀ դեսպանության ռազմական կցորդ Գարիկ Մուրադյանը: Մի խումբ հայորդիներ պարգեւատրվեցին «Արցախ» պատվոգրերով:

Համերգի կազմակերպիչներ «Հայարտուն» մշակույթի կենտրոնի մշակույթի բաժնի վարիչ Լեւոն Չիդիլյանի, երաժշտական բաժնի ղեկավար Պավել Օգանեզովի եւ տեխնիկական պատասխանատու Վալերի Բադալյանի անդուլ ջանքերով Հայրենական պատերազմի հաղթական ավարտի 67-րդ եւ Շուշիի ազատագրման 20-րդ տարեդարձի տոնական շունչը, որ թեւածում էր դահլիճի բեմահարթակում, իր գիրկն առնելով հանդիսատեսին, դարձավ համընդհանուր բերկրանքի եւ բարձր տրամադրության վառ արտահայտություն:

ՍՈՒՋԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

«ՆԱՐԵԿԱՑԻ» ՄԻՈՒԹՅԱՆ ՏԱՂԱՎԱՐԸ

## Արցախյան մշակույթի ներկայացում Շուշիում



Մայիսի 9-ին Շուշիի «Հին այգում» (Շուշիի բերդի հարակից տարածքում) Շուշիի ազատագրման 20-ամյակին նվիրված Ժողովրդական տոնախմբություն էր կազմակերպվել ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարությունը: Տոնախմբությունը ուղեկցվում էր հայկական երգ ու պարով: Առանձին տաղավարներում ներկայացված էր արցախյան մշակույթը:

Առանձին տաղավար ուներ նաեւ «Նարեկացի» արվեստի միության Շուշիի կենտրոնը, որտեղ ներկայացվել էին «Նարեկացի» արվեստի միության Շուշիի կենտրոնի սաների աշխատանքները: Իրենց աշխատանքներն էին ներկայացրել կենտրոնի գեղանկարչության, մանրանկարչության, արտթերապիայի, ասեղնագործության, փայտագործության ու լուսանկարչության խմբակների սաները:

Ներկաները բոլորն էլ տպավորված էին թե ՆԱՄ կենտրոնի սաների աշխատանքներով եւ մյուս տաղավարներով:

Միջոցառման ընթացքում հորդ անձրեւ սկսվեց, ինչը, սակայն, չփչացրեց հարյուրավոր մարդկանց տոնական տրամադրությունը, եւ միջոցառումն ընթացավ իր բնականոն հունով:

«Նարեկացի» արվեստի միության (ՆԱՄ) Շուշիի մասնաճյուղը գործում է 2006թ. սեպտեմբերից: Արդեն ավելի քան 5 տարի է՝ Նարեկ Հարությունյանի ջանքերով կենտրոնում գործում են գեղանկարչության, մանրանկարչության, լուսանկարչության, ձեռագործության, ասմունքի, պարի, թատերական, փայտի փորագրության եւ այլ խմբակներ, որոնց դասընթացներին հաճախում է ավելի քան 135 երեխա: ՆԱՄ-ի Շուշիի կենտրոնում ստեղծված են բոլոր անհրաժեշտ պայմանները հաշմանդամություն ունեցող մարդկանց ազատ տեղաշարժման համար, ինչի շնորհիվ հաշմանդամ արվեստագետներն ու արվեստասերները հնարավորություն ունեն մասնակցելու բոլոր միջոցառումներին: Իրականացվում են մի շարք ծրագրեր, միջոցառումներ թե՛ կենտրոն հաճախող երեխաների, թե՛ ՀՀ-ից եւ արտերկրից ժամանած արվեստագետների մասնակցությամբ:

«Նարեկացի» արվեստի միության Շուշիի մասնաճյուղը իր կարեւորագույն դերն է կատարում շուշեցի երեխաների առօրյայում՝ մեծ ներդրում ունենալով նաեւ ողջ Արցախի հանրապետության մշակութային կյանքի զարգացման գործում:

Պատասխանատու՝
ԱՐԵՎԻԿ ԴԱՆԻԵԼՅԱՆ

# Շարունակվում է «Ազգային պատկերասրահ» երաժշտական փառատոնը

«**Ազգը**» պարբերաբար անդրադառնում է «Արվեստների պատկերասրահ» մշակութային հիմնադրամի եւ ՀՀ մշակույթի նախարարության հետ համատեղ անցկացվող «Ազգային պատկերասրահ» երաժշտական միջազգային փառատոնին: Տարեց-տարի այս փառատոնը մեծ հնչեղություն ու կարեւորություն է ստանում, ներկայացնելով աշխարհում հայտնի երաժիշտների, որոնց թվում են նաեւ Հայաստանում ծնված եւ երաժշտական կրթություն ստացածները: Այսօր հայ հայտնի երաժիշտները զարդարում են աշխարհի շատ բեմեր, որոնց մենք ժամանակ առ ժամանակ ունկնդրում ենք «Ազգային պատկերասրահ» երաժշտական փառատոնի շրջանակներում: Արդեն 8-րդ փառատոնի ընթացքում կայացել է երեք հրաշալի համերգ: Իսկ մայիսի 12-ին ժամը 19-ին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը երաժշտասերները հնարավորություն կունենան ծանոթանալ ու ըմբոշխնել ՌԴ հրավիրված «Ակլադենո» դուետի ելույթը՝ Մարիա Վլասովա-ակորդեոն, Եվգենի Վարավկո-կլարնետ: Ռուսաստանյան եւ եվրոպական բազմաթիվ քաղաքներում դուետը հանդես է եկել դասական եւ ժամանակակից երաժշտական ծրագրերով: Դուետը մի շարք հեղինակավոր միջազգային մրցույթներում հաղթել է եւ արժանացել դափնեկրի կոչման: Երաժիշտները նաեւ մեծ բեմեր են նվաճել անհատական ելույթներով՝ աշխարհի շատ բեմերում: Երեւանյան համերգային ծրագրում դուետը ընդգրկել է Հենդելի-սոնատ ֆլեյտայի, բասսո կոնտինուոյի համար, Պագանինիի, Լիստի, Բուզոնի, ինչպես նաեւ Լիպսի «Կամպանելլա», Վիդմանի «Ֆանտազիա», Բրոների «Հրեական քաղամասի երաժշտություն», Պոդգայցի «Հանդիպում Հայդնի հետ», Կասադոի «Requiebros», Բեյթելմանի 2 արիա տանգոյի շուրջ, Կոննեսոնի «Դիսկո տանգո», Էսկելի «Վերտուոզ տանգո», Պերնեի «Կոնցոնետտա», Սարասատեի եւ Բալդերոի «Կարմեն ֆանտազիա» ստեղծագործությունները:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ


## 30.05.2012թ. «Դեբեդ-Աղստեւ-ջրառ» ՓԲԸ-ում կայանալիք աճուրդում վաճառվող հիմնական միջոցների

«Դեբեդ-Աղստեւ-ջրառ» ՓԲԸ-ն հայտարարում է աճուրդ-վաճառք ՓԲԸ-ի հաշվեկշռում հաշվառվող ոչ ընթացիկ ակտիվների եւ նյութական արժեքների հետեւյալ անվանացանկով:

Անվանացանկը կցվում է՝ բաղկացած 3 թերթից 106 անուն: Աճուրդ-վաճառքը կկայանա յուրաքանչյուր անվանումն առանձին լոտով 30.05.2012 թ.-ի ժամը 14:00-ին:

Հասցեն՝ Տավուշի մարզ, գ. Հաղթանակ, «Դեբեդ-Աղստեւ-ջրառ» ՓԲԸ-ի վարչական շենք:

Դիմումները կարող են ներկայացնել մինչեւ 29.05.2012 թ.-ի ժամը 14:00-ն:

Տեղեկատվությունների համար դիմել հետեւյալ հեռախոսահամարներով.
099 06 27 22, 094 99 44 39
Էլ. փոստ՝ debed-axstev-jrar@mail.ru
Վավերապայմաններն են՝
ԱՇԲԲ Նոյ. մասն.
ՀՀ 2476800024220010
ՀՎՀՀ 07403997

Տնօրենի պ/կ Գ. ՎԵՐԱՆՅԱՆ

| հ/հ ը/կ | Գույքի անվանումը /մակնիշը/ | Շահագործման տարեթիվը | Քանակը հաշվառմամբ հատ | Առաջարկվող արժեք /դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Ա/մեքենա ՄԱԶ- 4502, 89-30 | 1989 | 1 | 370000 |
| 2 | Ա/ցիստեռն ԱՑ-4.2 | 1981 | 1 | 150000 |
| 3 | Ավտոբուս ԿԱՎԶ-685 | 1986 | 1 | 190000 |
| 4 | Էքավատոր ԷՕ-2621 | 1985 | 1 | 270000 |
| 5 | Ա/մեքենա ՍԱԶ-3507 | 1985 | 1 | 240000 |
| 6 | Մոտոռոլեր ՏԳԱ-200 | 1978 | 1 | 5000 |
| 7 | Մոտոռոլեր ՏԳԱ-200 | 1978 | 1 | 5000 |
| 8 | Ա/մեքենա ԻԺ-2715 | 1988 | 1 | 125000 |
| 9 | Մոտոցիկլետ ԻԺ-J-4 | 1982 | 1 | 5000 |
| 10 | Կցասայլ տրակտորի 2ՊՏՍ-4Մ | 1987 | 1 | 25000 |
| 11 | Կոմպրեսոր ԶԻՖ-5593 | 1987 | 1 | 40000 |
| 12 | Վագոն տնակ «Ստավրապոլեց» | 1992 | 1 | 10000 |
| 13 | Ա/մեքենա ԿՍ -2571Ա | 1989 | 1 | 870000 |
| 14 | Խառատային հաստոց 16E16KP | 1990 | 1 | 57000 |
| 15 | Եռակցման տրանս. ՏԴՄ-503 | 1985 | 1 | 5000 |
| 16 | Գայլիկոնման հաստոց Մ-118Ա | 1975 | 1 | 30000 |
| 17 | Փայտամշակման հաստոց | 1975 | 1 | 10000 |
| 18 | Տրանսֆորմատոր | 1963 | 1 | 15000 |
| 19 | Դռան էլ.լուսավորություն | 1963 | 1 | 17500 |
| 20 | Դռան էլ.լուսավորություն | 1963 | 1 | 35000 |
| 21 | Կոնտակտոր | 1963 | 2 | 5000 |
| 22 | Անջատիչ ներքին տեղակայմամբ | 1963 | 1 | 10000 |
| 23 | Փական | 1983 | 3 | 63000 |
| 24 | Հետադարձ փական | 1983 | 3 | 36000 |
| 25 | Էլ. եռակցման տրանսֆորմատոր | 1988 | 1 | 10000 |
| 26 | Պողպատյա փական | 1973 | 3 | 84000 |
| 27 | Էլ. սնուցման գծի փայտյա հենասյուն | 1973 | 20 | 38400 |
| 28 | Պողպատյա փական | 1973 | 3 | 63000 |
| 29 | Համակարգիչ | 2000 | 1 | 10000 |
| 30 | Բեռնատար ԳԱԶ -ՍԱԶ-3507 | 1988 | 1 | 270000 |
| 31 | Բեռնատար ՄԱԶ -5549 | 1990 | 1 | 350000 |
| 32 | Հատուկ ԱՑ-3613 | 1990 | 1 | 86000 |
| 33 | Էլ զոդման ապարատ | 1990 | 1 | 15000 |
| 34 | Բեռնատար ԳԱԶ -66-11 | 1991 | 1 | 200000 |
| 35 | Շարժական ջրհան կայան | 1991 | 1 | 11000 |
| 36 | Տրակտոր D3-162-3 | 1991 | 1 | 280000 |
| 37 | Տրակտոր MT3-80 | 1983 | 1 | 200000 |
| 38 | Ավտոկռան KC-1562 | 1983 | 1 | 300000 |
| 39 | Եռաֆազ հաշվիչ | 2000 | 1 | 5000 |
| 40 | Եռաֆազ հաշվիչ ՍՏԷՄ -100Ա | 2000 | 1 | 5000 |
| 41 | Եռաֆազ հաշվիչ | 2000 | 1 | 5000 |
| 42 | Եռաֆազ հաշվիչ ՍՏԷՄ -100Ա | 2000 | 1 | 5000 |
| 43 | Ավազան մ/ բետոն | 1983 | 1 | 360000 |
| 44 | Պոմպ 3B 200*4 | 1977 | 1 | 50000 |
| 45 | Հակադարձ կափյուռ d=300մմ | 1977 | 2 | 14000 |
| 46 | Փական d=300մմ պողպատ | 1977 | 2 | 20000 |
| 47 | Էլ շարժիչ A3315S1-4Y3 | 1963 | 1 | 50000 |
| 48 | Էլ շարժիչ A-113-4 | 1977 | 1 | 60000 |
| 49 | Էլ շարժիչ A-13-59-4 | 1977 | 2 | 200000 |
| 50 | Մոտեցնող ջրանցք մ/բ | 1971 | 1 | 400000 |
| 51 | Ջրընդունիչ հոր մ/բ | 1971 | 1 | 20000 |
| 52 | Ջրչափ հոր մ/բ | 1971 | 1 | 20000 |
| 53 | Լվացման տղմազտարան մ/բ | 1971 | 1 | 170000 |
| 54 | Ջրթափ ընդունող հորով | 1971 | 1 | 20000 |
| 55 | Կամուրջ պատնեշի վրա մ/բ | 1971 | 1 | 12000 |
| 56 | Ջրաչափ պատնեշ մ/բ | 1971 | 1 | 380000 |
| 57 | Գլխամասային մոտեցնող ջրանցք | 1971 | 1 | 920000 |
| 58 | Էլ շիթ Բարձր լարման բաշխիչ վահան KPYH KXII | 1971 | 8 | 376000 |
| 59 | Տրանսֆ ենթակայան TM -400 | 1963 | 1 | 240000 |
| 60 | Էլ շարժիչ A3315S1-4Y3 | 1963 | 1 | 10000 |
| 61 | Այգեձորի N4 ջրհան կայանի պոմպ ՑՆՍ -180/170 | 1963 | 1 | 38000 |
| 62 | Հակադարձ փական պողպատյա d=200մմ | 1963 | 1 | 5500 |
| 63 | Փական պողպատ | 1963 | 2 | 16000 |
| 64 | Փական չուգունե | 1963 | 2 | 6000 |
| 65 | Էլ շարժիչ A-2-81-2 | 1963 | 1 | 27000 |
| 66 | Չինարիի N2 ջ/կ-նի պոմպ -ՑՆՍ-60-264 | 1963 | 1 | 20000 |
| 67 | Հակադարձ փական պողպատ | 1963 | 1 | 5000 |
| 68 | Փական պողպատ | 1963 | 2 | 5000 |
| 69 | Հիդրոպոմպ | 1990 | 1 | 500000 |
| 70 | Պոմպ հորիզոնական | 1969 | 2 | 70000 |
| 71 | Էքսկավատոր Է-4121Բ | 1987 | 1 | 10000 |
| 72 | Էքսկավատոր Է-4121Բ | 1988 | 1 | 10000 |
| 73 | Համակարգիչ Պենտիում 2 | 2000 | 1 | 10000 |
| 74 | Էլչափիչ սարքեր-հաշվիչ | 1989 | 1 | 14500 |
| 75 | Վակում պոմպՎՎՆ-1.0 | 1989 | 1 | 5500 |
| 76 | Էլավտ անջատիչ 630Ա.ԿՏ35 | 1989 | 2 | 5000 |
| 77 | Էլ.կոնտակտոր ԿՏ-35 | 1989 | 1 | 5000 |
| 78 | Փական | 1990 | 2 | 28000 |
| 79 | Ղուռալի N 2 պ/կ | 1989 | 2 | 16000 |
| 80 | Փական | 1989 | 2 | 16000 |
| 81 | Սառալի N 1 պ/կ | 1989 | 2 | 16000 |
| 82 | Էլ.շարժ 160կՎՏ 1500պտ/ր, 400Վ Ա102-4 | 1989 | 2 | 11200 |
| 83 | Ղուռալիի N1 պ/կ Վագոն տնակ՝ պատրաստված սենդվիչներ | 1989 | 1 | 10000 |
| 84 | Հակադարձ կափյուր դ-250 | | 2.00 | 10000 |
| 85 | Հակադարձ կափյուր դ-300 | | 6.00 | 30000 |
| 86 | Հակադարձ կափյուր դ-60 | | 1.00 | 5000 |
| 87 | Փական դ-20մմ | | 2.00 | 2000 |
| 88 | հակադարձ փական դ-200 | | 2.00 | 10000 |
| 89 | Վեր.պոմպ ՑՆՍ240 | | 1.00 | 60000 |
| 90 | Վեր.պոմպ ՑՆՍ 300-120 | | 2.00 | 150000 |
| 91 | վերանորոգման պոմպ | | 2.00 | 80000 |
| 92 | Բանվորական անիվ 363*200*400 | | 2.00 | 10000 |
| 93 | Բանվորական անիվ 313*200*4 | | 2.00 | 10000 |
| 94 | Բանվորական անիվ 103*44 | | 3.00 | 15000 |
| 95 | Բանվորական անիվ 20*76 | | 4.00 | 20000 |
| 96 | Երկաթյան թմբուկ | | 1.00 | 5000 |
| 97 | Կռանի հեծան | | 1.00 | 7000 |
| 98 | Գրասեղան | | 2.00 | 10000 |
| 99 | Երկաթ բետոն կոնստրուկցիա խ.մ | | 3.00 | 15000 |
| 100 | ջրթող 480 | | 10.00 | 32000 |
| 101 | Ջրթող 500/610 | | 10.00 | 36000 |
| 102 | Ուժային տրանսֆորմատոր 3Մ-250 | | 1.00 | 20000 |
| 103 | Ուժային տրանսֆորմատոր 1000/10 | | 1.00 | 25000 |
| 104 | Աթոռ | | 30.00 | 30000 |
| 105 | ԿՏՊՏՄ 6.0160կվ | | 1.00 | 6250 |
| 106 | Տրանսֆորմատոր ցածր լարման | | 1.00 | 5000 |

«Դեբեդ-Աղստեւ-ջրառ» ՓԲԸ-ի տնօրենի պաշտոնակատար
Գ. Վերանյան

# Ֆուտբոլասերները Մխիթարյանին լավագույնն են ճանաչել

Դոնեցկի «Շախտյորի» պաշտոնական կայքն ամփոփել է ապրիլ ամսվա լավագույն ֆուտբոլիստի կոչման համար ֆուտբոլասերների շրջանում անցկացված հարցման արդյունքները: 3-րդ անգամ անընդմեջ բոլորից շատ՝ 798 ձայն է ստացել Հենրիխ Մխիթարյանը: Հարցմանը մասնակցել են 1555 ֆուտբոլասերներ: Կասկած չկա, որ նրանց մեծամասնությունը Հայաստանից են, որոնք երկրպագում են Մխիթարյանին: 2-րդ տեղում թիմի պաշտպան Յարոսլավ Ռակիցկին է՝ 234 ձայն: Լավագույն եռյակը եզրափակել է բրազիլացի Ալեքս Տեյշեյրան՝ 196:




Հիշեցնենք, որ ամսվա լավագույն ֆուտբոլիստին որոշելու համար ինտերնետային հարցման արդյունքներին գումարվում են նաեւ ակումբի վետերանների եւ մարզական լրագրողների միջեւ անցկացված մրցույթում վաստակած միավորները:

Իսկ ահա «Սպորտ էքսպրեսի» անցկացրած հարցման արդյունքներով Հենրիխ Մխիթարյանը ապրիլ ամսվա ԱՊՀ երկրների լավագույն ֆուտբոլիստների ցանկում զբաղեցրել է 2-րդ տեղը: Նա վաստակել է ձայների 28,54 տոկոսը: Լավագույնն է ճանաչվել Մոսկվայի ԲԿՄԱ-ի դարպասապահ Իգոր Ակինֆեեւը (28,64 տոկոս): Լավագույն եռյակը եզրափակել է Սանկտ Պետերբուրգի «Զենիթում» վարձավճարով հանդես եկող Անդրեյ Արշավինը (21,24 տոկոս):

Ի դեպ, Դոնեցկի «Շախտյորը» ֆուտբոլի պատմության եւ վիճակագրության միջազգային ֆեդերացիայի կողմից ճանաչվել է որպես աշխարհում ամենաառաջադիմող ակումբ: Այդ փաստը վկայող հատուկ հավաստագիր է հանձնվել ակումբի տնօրեն Սերգեյ Պալկինին: 2-րդ տեղում «Վիլյառեալն» է, 3-րդը՝ «Սեւիլիան» է:

# «Ատլետիկոն» Եվրոպայի լիգայի կրկնակի գավաթակիր



Մադրիդի «Ատլետիկոն» վերջին 3 տարվա ընթացքում 2-րդ անգամ նվաճեց Եվրոպայի լիգայի գավաթը: Բուխարեստում կայացած եզրափակիչ խաղում «Ատլետիկոն» 3-0 հաշվով ջախջախեց Բիլբաոյի «Ատլետիկին»: Հանդիպման հերոսը «Ատլետիկոյի» կոլումբիացի հարձակվող Ռամադել Ֆալկաոն էր, որը դեռեւս առաջին խաղակեսում 2 անգամ գրավեց մրցակցի դարպասը՝ փաստորեն վճռելով մրցակցության ելքը: Ֆալկաոն 2-րդ տարին անընդմեջ դարձավ Եվրոպայի լիգայի մրցաշարի լավագույն ռմբարկու՝ խփելով 12 գնդակ: Նա նաեւ 2-րդ տարին անընդմեջ նվաճեց պատվավոր մրցանակը: Հիշեցնենք, որ անցյալ տարի Ֆալկաոն պորտուգալական «Պորտոյի» կազմում էր դարձել Եվրոպայի լիգայի գավաթակիր՝ 17 գնդակով ճանաչվելով նաեւ մրցաշարի լավագույն ռմբարկու: 2 մրցաշրջանում Ֆալկաոն Եվրոպայի լիգայի մրցաշարում անցկացրած 29 խաղում նույնքան գոլի հեղինակ է դարձել: Այդ ցուցանիշով նա մրցաշարի ողջ պատմության մեջ լավագույն ռմբարկուների ցանկում 2-րդ տեղում է: Ցուցակը գլխավորում է շվեդ հանրահայտ նախկին ֆուտբոլիստ Հենրիկ Լարսոնը, որը խփել է 31 գոլ: 29 գոլ է խփել նաեւ Դիտեր Մյուլլերը:

Հանդիպման մասին թիմերի մարզիչների կարծիքը հետեւյալն է:

**Դիեգո Սիմեոնե** («Ատլետիկո»)-Հաղթելը մշտապես հաճելի զգացում է: Ֆուտբոլիստները խաղադաշտում մեծ բավականություն են ստանում, կարող են վազել ու բացականչել: Հասկանում ես, որ դա ֆուտբոլիստների փառքի պահն է: Շատ հպարտ եմ իմ ֆուտբոլիստներով, ուրախ եմ «Ատլետիկոյի» համար ու շնորհակալ եմ այն մարդկանց, որոնք հավատում էին մեզ: Այսօր ցույց տվեցինք, որ «Ատլետիկոն» առաջատար թիմ է, որը նաեւ շատ հուսալիորեն է պաշտպանվում:

Հիացած եմ Ֆալկաոյի խաղով: Նա կարողացավ մոռանալ այն ամենը, ինչին հասել էր անցյալ տարի «Պորտոյում» եւ այսօր նպաստեց թիմի հաջողությանը: Ես նրան փոքր տարիքից եմ ճանաչում: 2008-ին «Ռիվեր փլեյթում» նրա հետ միասին նվաճեցինք Արգենտինայի չեմպիոնի տիտղոսը: Նա հիանալի անձնավորություն է, որին սիրում եւ որով հպարտանում եմ:

**Մարսելո Բիելսա** («Ատլետիկ»)-Բնականաբար, նման արդյունքի չէինք սպասում: Որոշիչ եղավ այն, որ «Ատլետիկոն» խաղաց իր ծրագրածին համապատասխան, իսկ մենք չկարողացանք մեր խաղը ցուցադրել: Սա էլ հենց պարտության գլխավոր պատճառն էր: Արդյունքի համար ողջ պատասխանատվությունը վերցնում եմ ինձ վրա: Մրցակիցը գոլային 8 պահերից 3-ն իրացրեց, իսկ մենք 9 հնարավորից ոչնչի չհասանք: Մենք վատ էինք պաշտպանվում, լավագույն ձեւով չէինք հարձակվում: Մի խոսքով թիմն իր հնարավորություններից ցածր հանդես եկավ: Դրանում բացառապես ինքս եմ մեղավոր:

Մադրիդի «Ատլետիկոյի» 42-ամյա գլխավոր մարզիչ Դիեգո Սիմեոնեն դարձավ ՈՒԵՖԱ-ի գավաթը որպես ֆուտբոլիստ ու մարզիչ նվաճած ընդամենը 3-րդ անձնավորությունը: Որպես ֆուտբոլիստ նա իտալական «Ինտերի» կազմում էր 1998-ին նվաճել ՈՒԵՖԱ-ի գավաթը: Այդ տարի եզրափակիչում «Ինտերը» 3-0 հաշվով հաղթել էր «Լացիոյին»:

Նախկինում նման նվաճման էին հասել միայն Դինո Զոֆը եւ Յուպ Սթիվենսը: Զոֆը որպես «Յուվենտուսի» դարպասապահ ՈՒԵՖԱ-ի գավաթակիր էր դարձել 1997-ին: Իսկ 1990-ին նրա գլխավորությամբ «Յուվենտուսը» նվաճեց պատվավոր մրցանակը: Սթիվենսը գավաթակիր է դարձել «Էյնդհովենում» 1978-ին: Իսկ 19 տարի անց նրա գլխավորությամբ «Շալկե-04-ը» նվաճել է ՈՒԵՖԱ-ի գավաթը:

Ավելացնենք նաեւ, որ նախկինում ոչեվրոպացի միայն 3 մարզչի՝ արգենտինացիներ Լուիս Կարնիլյային, Էլենիո Էրերային եւ Ալֆրեդո դի Ստեֆանոյին էր հաջողվել իրենց թիմերին եվրոգավաթի հաղթող դարձնել:

# Մելքումյանն առաջին պարտությունը կրեց

Սարաեւոյի շախմատի մրցաշարի մեկնարկում 5 անընդմեջ հաղթանակ տոնած Հրանտ Մելքումյանը հերթական 2 տուրերում անհաջող խաղաց՝ վաստակելով ընդամենը կես միավոր: 6-րդ տուրում նա ոչ-ոքի խաղաց Վիկտոր Էրդոսի հետ, իսկ հաջորդ մրցախաղում զիջեց Եվգենի Պոստնիին՝ կրելով առաջին պարտությունը: 7 տուրից հետո Մելքումյանը Պոստնիի հետ 5,5 միավորով գլխավորում է աղյուսակը: Նրանց հետապնդող Վիկտոր Էրդոսը, Միխայիլ Անտիպովն ու Տամիր Նաբատուն ունեն 5-ական միավոր: Մրցաշարի ավարտին մնացել է 2 տուր:



# Հայ շախմատիստներն առաջատարների թվում են

Շախմատի ԱՄՆ-ի առաջնության տղամարդկանց մրցաշարում հաջող է մեկնարկել Վարուժան Հակոբյանը: Մեկնարկային տուրում նա սպիտակներով հաղթեց Յասեր Սեյրավանին, իսկ հաջորդ պարտիան Յուրի Շուլմանի հետ ավարտեց ոչ-ոքի: 2 տուրից հետո Հակոբյանը 1,5 միավորով Ալեքսանդր Լենդերմանի, Ալեքսանդր Օնիշչուկի, Գատա Կամսկու, Հիկարու Նակամուրայի եւ Գրեգորի Կայդանովի հետ գլխավորում է աղյուսակը:

Առաջատարների խմբում է նաեւ կանանց մրցաշարի մասնակից Տաթեւ Աբրահամյանը: Նա մրցաշարը սկսեց Վիկտորիա Նիի հետ ոչ-ոքիով, ապա հաղթեց Ալյոնա Կաշլինին: Տաթեւը 1,5 միավորով 2-4-րդ տեղերն է բաժանում Իրինա Զենյուկի եւ Իրինա Կրուշի հետ: 2 միավորով առաջատարն Աննա Զատոնսկիխն է, որը հաղթել է Ալյոնա Կաշլինին եւ Քամիլա Բագինսկայտեին:

# ՀՀ հավաքականը կրկին 47-րդն է

Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականը պահպանել է 47-րդ հորիզոնականը ՖԻՖԱ-ի դասակարգման նոր ցուցակում: Ապրիլին հավաքականների մակարդակով հանդիպումներ շատ քիչ են անցկացվել, ուստի ցուցակում փոփոխությունները չնչին են:

Լավագույն տասնյակում 1-8-րդ հորիզոնականներում գտնվող հավաքականները պահպանել են իրենց դիրքերը: Ցուցակը շարունակում է գլխավորել Իսպանիայի հավաքականը, որին հաջորդում են Գերմանիայի, Ուրուգվայի, Հոլանդիայի, Պորտուգալիայի, Բրազիլիայի, Անգլիայի եւ Խորվաթիայի ընտրանիները: 9-րդ տեղում ընթացող արգենտինացիները շրջանցել են դանիացիներին, որոնք եզրափակում են լավագույն տասնյակը:

Հունաստանի հավաքականը, որի հետ մեր ընտրանին մայիսի 31-ին Ավստրիայում ընկերական մրցախաղ է անցկացնելու, 961 միավորով 14-րդ տեղում է: Իսկ ղազախները, որոնց հայ ֆուտբոլիստները հյուրընկալելու են հունիսի 5-ին Երեւանում, 243 միավորով 137-րդն են:

Նախկին ԽՍՀՄ հանրապետությունների հավաքականներից ամենաբարձր վարկանիշն ունի ՌԴ հավաքականը, որը 11-րդ տեղում է: 2-րդ ցուցանիշն ունի Հայաստանի հավաքականը: Վրացիները 95-րդ տեղում են, ադրբեջանցիները՝ 109-րդ:

# Օլիմպիական ջահը սկսեց ուղեւորությունը դեպի Լոնդոն



Երեկ Հունաստանի Հին Օլիմպիա բնակավայրում հանդիսավոր պայմաններում վառվել է Լոնդոնի ամառային 30-րդ օլիմպիական խաղերի կրակը: Օլիմպիական ջահի փոխանցումավազքն այս անգամ կսահմանափակվի Հունաստանով, Մեծ Բրիտանիայով եւ Իռլանդիայով: Դա պայմանավորված է անվտանգության նկատառումներով եւ դրա ապահովման համար պահանջվող մեծ ծախսերով: Առաջին անգամ օլիմպիական կրակի վառման հանդիսավոր արարողություն տեղի է ունեցել 1936-ի Բեռլինի օլիմպիադայի մեկնարկից առաջ: Իսկ 1948-ի Լոնդոնի օլիմպիական խաղերից սկսած այդ արարողությունը վերածվել է ավանդույթի:

Եվ այսպես, օլիմպիական ջահը սկսեց իր ուղեւորությունը դեպի Լոնդոն: Առաջին ջահակիրը լողի աշխարհի չեմպիոն Սպիրոս Յանիոտիսն է: Ջահի փոխանցումավազքը կտեւի 70 օր եւ կավարտվի հուլիսի 27-ին Լոնդոնի օլիմպիական մարզադաշտում:

Առաջիկա մեկ շաբաթում փոխանցումավազքը կանցնի Հունաստանի տարբեր քաղաքներով, այնուհետեւ կշարունակվի բրիտանական հողում: Ընդհանուր առմամբ օլիմպիական կրակի փոխանցումավազքին կմասնակցեն 8 հազար ջահակիրներ:

Այս տարվա փոխանցումավազքը հավանաբար վերջինը լինի: 2016-ին Ռիո դե Ժանեյրոյում կայանալիք ամառային օլիմպիադայից առաջ ՄՕԿ-ը պաշտոնապես կարգելի փոխանցումավազքի անցկացումը: Սոչիի օլիմպիադայի կազմկոմիտեին էլ խորհուրդ է տրվել սահմանափակվել միայն Ռուսաստանի տարածքում կազմակերպվելիք փոխանցումավազքով:

Հիշեցնենք, որ Պեկինի օլիմպիադայի ջահի փոխանցումավազքի մասնակիցների վրա հարձակվել էին Տիբեթի բնակչության շահերի պաշտպանները, որոնց կարծիքով չինական իշխանությունները խախտում էին մարդու իրավունքները:

# «Շիրակը» կամային հաղթանակ տոնեց

Ֆուտբոլի Հայաստանի գավաթը նվաճելուց հետո Գյումրիի «Շիրակը» վերելքով է հանդես գալիս: 6-րդ տուրից հետաձգված խաղում գյումրեցիները Կապանում 2-1 հաշվով կամային հաղթանակ տոնեցին «Գանձասարի» նկատմամբ: Առաջին խաղակեսում Յամադրոու Կեյտան առաջ մղեց դաշտի տերերին, սակայն հետագայում շիրակցիները բեկում մտցրին մրցակցությունում: 2-րդ խաղակեսի սկզբին շիրակցի Արարատ Հարությունյանի տուգանային հարվածից հետո գանձասարցի Անդրանիկ Սարգսյանը գնդակը շեղեց սեփական դարպասը: «Շիրակին» հաղթանակ պարգեւեց Լամին Լի Յորոն՝ խփելով 2-րդ գնդակը: Վերջինս «Շիրակի» վերջին 3 խաղերում դաշտից չի հեռանում առանց գոլի:

Այս հաղթանակից հետո «Շիրակը» վաստակեց 12 միավոր ու տեղ զբաղեցրեց 2-րդ հորիզոնականում: 13 միավորով առաջատարը «Միկան» է: Հերթական տուրի հանդիպումները կկայանան մայիսի 12-13-ին: Իսկ մայիսի 16-ին կանցկացվի առաջնության 1-ին տուրը, որը հետաձգվել էր խաղադաշտերի անպատրաստ լինելու պատճառով:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

